


7840

84.092

47-55u



84-092  
Գ-554

ԵԳԱԿԱԿ

# ՓԻԷՐ ՔԻՅԵԱՌԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Է. ԱԿԵՈՒՆԻ  
Ա. ԱԶԱՐՈՒԵԱՆ  
ԱՏՐՈՒՏԱՆ  
Ա. ԱՐԺԻՒԵԱՆ  
Գ. ԲԱՐՍԵՂԵԱՆ  
Զ. ԵՍԱՑԵԱՆ  
Ո. ԶԱՐԴԱՐԵԱՆ  
Ս. ԶԱՒԱՐԵԱՆ  
Գ. ԶՈՂՐԱՄ  
Պ. ՀԱԼԱՑԵԱՆ  
ՄԱՐ  
Ս. ՄԻՆԱՍԵԱՆ  
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ  
Ա. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ  
Հ. ՆԱԶԱՐԵԱՆ  
Ց. ՇԱՀՐԻԿԵԱՆ  
ՍԻԱՄԱՆԹՈ  
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ  
Գ. ՎԱՐՈՒԺԱՆ

1913  
Ա. Պոլիս

ՄԱՅՈՒԱՆ  
ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

1912—1913



1 JUL 2013

7840

84.092  
F-554.

22 MAY 2006  
1 NOV 2006

ՍԳԱՊՍԱԿ

# ՓԻԷՐ ՔԻՅԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հրատարակութիւն  
«Ա.ԲԾԻՒ»,  
Ժողովրդական Դրավաճառանոցի



4191-89

- Է. ԱԿՆՈՒՆԻ
- Ա. ԱԶԱՐՈՂՆԵԱՆ
- ԱՏՐՈՒՏԱՆ
- Ա. ԱՐԾԻՒԽԵԱՆ
- Գ. ԲԱՐՍԵՂԵԱՆ
- Զ. ԵՍԱՅԵԱՆ
- Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ
- Ս. ԶԱՒԱՐԵԱՆ
- Գ. ԶՈՂՐԱՊ
- Պ. ՀԱԼԱՑԵԱՆ
- ՄԱՐ
- Ս. ՄԻՆԱՍԵԱՆ
- Շ. ՄԻՍԱՔԵԱՆ
- Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
- Հ. ՆԱԶԱՐԵԱՆ
- Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ
- ՄԻԱՄԱՆՅՈ
- Ա. ՎԱՐԱՆԴԵԱՆ
- Հ. ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1913  
Ա. Պալիս

Կոյր յավշտակութեամ սաղմոսերգութիւն  
մը չէ այս հատորը : Բոլոր անոնք որ, զրի-  
չով և կամ բեմի վրայ խօսքեր ու մեցեր եմ ըսե-  
լու Մեծ Օտարակամի յիշատակին, արտայա-  
տուած եմ իբրև խորապէս ծանօթ՝ Քիյեառի  
կեանքին ու գործութէութեամ, անոր մոռի խո-  
յանքին, անոր սրտի վճիտ բարախումներուն  
և նկարագրի հզօր գիծերուն :

Թէև տարբեր տեսակետներէ դիտող ու այ-  
լազամ զաւանաթքներու տէր, — բոլոր անոնք  
որ մասմակից եմ այս ծօմին, իրեմց վերլու-  
ծումներով կը ծգտին մէկ նպատակի, — ներ-  
կայացնել Մարդը ինչպէս որ էր, բացատել  
անոր Գործը իր իսկական բովանդակութեամբ :

Այս, ապահովաբար, լաւագոյն մեծարանքն  
է Փիէռ Քիյեառին՝ իր համակրողներուն կողմէ,  
որոնց շատերուն պայքարի ընկերն էր արի  
Ֆրանսացին, — ըլլալով միանգամայն յոյսի և  
խանդակութեամ մշտահոս ու անապակ աղ-  
բիւր մը՝ հայ ժողովուրդին համար :

**Համարակիչները**


## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՒՅՔ

Փիկո Քիյևառ ծնած է Փարիզ, 1864 թուիս 14 ին:  
Ուսումն առաջ Լիստ Քունուքի մէջ: Հետեւցաւ  
Փարիզի Գրականութեան կամարին: Յաձախնց նաև Բար-  
ձր Ուսումնեու վարժարան:

1884ին աշխատակիցն էր *La Basocherj*: 1886ին հիմնեց  
*La Pléiade*: 1891ին մինչդեռ իր մահը կ'աշխատակցէր  
*Mercure de France*: 1893ին Պոլիս նկատ եւ մնաց  
մինչդեռ 1896, իբր ուսուցիչ պաշտօնավարկով Ս. Լուսա-  
ւորիչ վարժարանին եւ Կողբանականի մէջ: 1897ին, հիմնեցաւ  
Թուրքանելլէն պատերազմին, իբրև բղրակից  
*Illustrationj*:

Փարիզ դարձին, կազմակերպեց բազմարիւ հայա-  
նպատ բանախօսութիւններ եւ միքիմներ, հիմնեց *Pro  
Armenia*, որ դադրեցաւ Օսմ. Սահմանադրութեան վե-  
րահստատումն յիսոյ: 1905-906 վարեց *Européen*, որ  
հմանապէս կը ծառայէր ճնշուած ազգերու դասին:  
1904ին անդամ ընտրուեցաւ Մարդկային իրաւունքներու  
Դաշնակցութեան կողբանական վարչութեան, որուն դեր-  
հախազանին եղաւ 1907ին, իսկ ընդհ. բարուդար՝ 1911ին:

Յանկարծամահ եղաւ 1912 Փետրվար 4ին:





## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒԳ

Ուսուցիչ, քերթող, հրապարակագիր մտաւորական մը . մէկը անոնցմէ որ կեանքը կ'ապրին իշխելով, կոխելուտելով անոր վրայ, տիրաբար, աշխարհակալի մը պէս, ոչ թէ պղտիկնալով շարունակ անոր առջև և միմիայն իրենց անձին սահմանելով զայն . գրկաբաց կեանք, գրկաբաց բոլոր տառապողներուն հանդէպ, բոլոր արհամարհուածներուն, զրկուածներուն :

Ուսուցիչ այն մեծ ուսումին որ մարդասիրութիւն կը կոչուի, երգողը՝ այն ցաւերուն որոնք պատմիչ չունին : Երազատե՛ս մը, եթէ կ'ուզէք, մին՝ անձնուրացներու սակաւաթիւ հոյէն որոնք դրիչ մը ձեռուընին՝ միս մինակ կը մղեն մեծ պայքարը, զօրաւորին դէմ կոխւը, անհաւասարը և յաւիտնականը, որոնց մէջ վերջ ի վերջոյ յաղթութիւնը կը տանին եթէ մեռնին իսկ . հին դարերու ասպետ՝ որուն յիշատակին ի պատիւ կանգնուելիք կոթողին վրայ Եարձաննեան՝ հատորի մը տեղ բառ մը պիտի գրէր, բառ մը միայն, Վեչսնջնօրէն :

Հարուածներ կան զոր մարդու կ'ընդունի առանց տրտունջ մը հանելու, առանց ճիչ մը, աղաղակ մը արձակելու, անոր համար որ անոնք ուզզակի սրտին ի՛իջնեն և լեզուն կը կապեն . Փիէր Քիյեառի մահը մեր աղգին համար՝ ատոնցմէ է :

Մտքիս առջև կը բերեմ իր աղմուական դէմքը :

Ամէն պատկեր առ հասարակ լոյսով և ստուերով կը ձեւանայ և սակայն ինձի այնպէս թուեցաւ, երբոր առաջին անգամ հանդիպեցայ անոր, որ այս դէմքը մի միայն լոյսով շմբուած էր: Ուրիշ շատ մը բաղդաւոր հայրենակիցներուա պէս հինուց չէի ճանչցած զինքը, բայց մունչ և խորունկ կապ մը, երախտագիտութեան և հիացման մեծ հարկը անսպայման կերպով իրեն կը կապէր զիս: Լաւ մը չեմ միշեր ինչե՛ր կրցայ ըսել իրեն, երբոր Սահմանադրութեան առաջին տարին ճաշի մը հրաւիրեցինք զինքը Թօքաթլեանի սրահին մէջ: բայց միտքս է ինձի պատասխանած խօսքերը.

— Ձեր մէջը ապրեցայ ես երեք տարի, և իր ցաւատանջ ճամբուն մէջ ձեր աղքին մարտիրոսութիւնը հետապնդեցի:

Եւ Հանոթոյի ակնարկելով՝

— Կը ճանչամ մէկը՝ Ֆրանսական Հանրապետութեան մէջ մեծ դիրքի տէր՝ որ բռնաւորական ոէժիմի պաշտպանը հանդիսանալէ չ'ամչցաւ. ըստ երեւոյթին կ'ապրի դեռ այսօր, բայց իրօք շատոնց մեռած է ան բարոյապէս: Հայկական արիւնը խեղդեց զինքը:

\* \*

Ո՞վ ես դուն, օտարական, որ քու զուարթ և երջանիկ հայրենիքով մոռնալով, բոլոր գութե և խանդադատանքով նուկիրեցիր տոգի և կտկիծի հողին՝ որ Հայաստան կը կոչուի: Ի՞նչպէս մեր անժամիտ ու թախծոտ երեսը քու ուշադրութիւնդ հրաւիրեց և, իսկոյն, սրտիդ գանձերը ու ճոխութիւնները անվերապահօրէն բացիր մեզի, եղբայրակցեցար մեզի հետ, անընդհատ տասներկու տարի մեր աղքին նահատակութեան աւետարանը՝ «Փրօ Արմենիա»ն գրեցիր, ջերմ հաւատքով մը և տեսիլքի մը մէջէն տևանելով կարծես մեծ Հրէշին անկումը իր արիւնոտ գահին վրայէն:

Երազատեսնե՞ր, դուք. Երբեք, քանի որ իրականութիւն են այսօր ձեր կրէկուան երազները. տեսէք թուրքիան, Փօրթուկալը և վաղնչական Զինաստանը աղատագրուած և ճամբու դնելով իրենց անուղղայ վեհապետները: Գործի մարդեր էք դուք, գերազանցապէս գործի մարդ, շքեղօրէն գործի մարդ, ապրելով սւրիշներուն համար, պիտի ըսէր Եղիան, երբոր անդին սովորական գործի մարդերը կ'ապրէն իրենց անձին համար միայն. Էահա զանազանութիւնը. ահա ձեր անջնջելի փառքը:

Մեռաւ ակնկալութիւնը չի ճանչցող այս մարդը անակնկալ կերպով, անակնկալ օրով մը որ այսունետեւ Հայկական Սուգի օրն է. մեռաւ, առանց իր այնքան սիրած Հայերուն բաղդը գոնէ որոշուած տեսնելու:

Ֆրանսայի մէջ է իր գերեզմանը. բայց իր անունը մերն է բղորովին. իր հրապարակագրի կեանքը մերն է, մեր աղքին պատմութեան էն պացծառ էջերէն մէկն է. իր յիշատակը մերն է և բովանդակ հայութիւնը պիտի հսկէ անոր վրայ:

Գ. ԶՕՀՐԱՊ

## ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ ԵՒ ՄԱՐԴԸ

Ոչ, երբեք հակասութիւն մը չէ որ Բանաստեղծը՝  
արուեստով գերազանցօրէն ազնուական, եղաւ կեանքի  
ըմբռնումով հանրավարական, ու Հաւատացեալ՝ համա-  
մարդկային խոչալներու։ Դէպի կատարելութիւն ձգտող  
հոգին, ճշմարիտ արուեստագէտի հոգին, չի կրնար չե-  
րազել աւելի արդար, աւելի պայծառ, և աւելի ներ-  
դաշնակ ու կատարեալ մարդկութիւն մը՝ քան այն որ  
կայ այժմ, անհաւասար ու անիրաւ, զօրաւորը՝ ամբար-  
տաւան ու եսասէր, տկարը՝ ոտնահարւած ու գետնասող։

Ի՞նչ է արուեստին գերազոյն նպատակը՝ եթէ ոչ  
նորեկան բարձրագոյն վայելքը, — Երջանկութիւնը, Եւ  
ի՞նչ է կեանքի միակ նպատակը՝ եթէ ոչ դարձեալ Եր-  
ջանկութիւնը, աւա՛զ, գոյութեան ակնթարթի մը մէջ  
ծփացող, որ սակայն ուրիշ ձեւով չի ներկայանար այսօր  
մարդոց բիւր անդամ բիւրաւորներուն համար՝ եթէ ոչ  
միայն հեծեծանքի ու անէծքի։

Ու Բանաստեղծը նախ Մարդ է. և ապա ուրեմն՝  
ճշմարտասէր ու իրաւախնդիր։ Եւ ի՞նչ աւելի ճշմարիտ  
քան գիտակցութիւնը այն ձշմարտութեան՝ թէ աշ-  
խարհքը կրնայ ըլլալ աւելի երջանիկ ու աղնիւ։ Եւ ի՞նչ  
աւելի իրաւ քան այն Դատը՝ որ անզօրներուն ու ան-  
պաշտպաններուն դատն է, անզօրներ՝ որպէս անհատ,  
որպէս դասակարգ, որպէս աղդ։

Հակասութիւնը հոն պիտի ըլլար որ Արուեստագէտը  
չըմբռստանար բոլոր այն արատներուն դէմ՝ որ կ'եղծնն  
կեանքի գեղեցկութիւնն ու ներդաշնակութիւնը, բոլոր  
այն շղթաներուն դէմ՝ որ կ'ըսեն մարդուն՝ ստորնացի՛ր,  
և աղգերուն՝ հպատակէ՛։

Այս պատճառով է որ նոր դարու ասպետները ան-  
դին կ'անցնին իրենց հայրենիքի սահմաններէն և իրենց  
իտէալով կ'ընդգրկին բոլոր ժողովուրդները և բովան-  
դակ մարդկութիւնը։ Մարտնչող մտաւորականներու  
փաղանգն է՝ որ Հայաստանէն մինչև Ֆինլանտիա, Լե-  
հաստանէն մինչև Մակեդոնիա, ու քաղաքակիրթ Եւրո-  
պայի մէջ, և կիսակիրթ Ասիոյ մէջ՝ ամէնուրեք պաշտ-  
պաննեց մարդկայնական գաղափարը՝ ընդդէմ բոլոր բռո-  
նութեանց, բոլոր անիրաւութեանց, բոլոր անարդա-  
րութեանց։

Ծնորհիւ այդ ասպետ մտաւորականութեան է որ  
ազգերը կը բարձրանան ու ժողովուրդները կը ձգտին  
դէպի կեանքի գեղեցկութիւնները։

Արուեստագէտը կատարեալ էր ու ազնուական,  
որովհետեւ եղաւ կատարեալ իրեւ Մարդ և ազնուական՝  
իրեւ Հոգի։

Եւ իմ մէջս որքան մեծ է հիացումը դէպի Արուես-  
տագէտը, որքան խոր է յարգանքս դէպի Մարդը։

Ու մեր նոր սերունդին համար ի՞նչ աւելի բարձ-  
րացնող ներշնչման խորհրդանշան՝ քան կատարեալ Ար-  
ուեստագէտի և կատարեալ Մարդու այն տիպարը, որ  
կը ներկայացնէ Փիէռ Քիյեառ, հայ ժողովուրդի ազա-  
տագրական գործնն հոյակապ ախոյեաններէն մին։

Ո. ԶԱՐԴԱՐԵԱՆ

## ԵՒՐՈՊԱՑԻՆ

Դիեր Քիյեառ կը գնահատուի շատ տեսակէտներէ : Ֆրանսացիները կը գնահատեն անոր բանաստեղծութիւնները, ընկերվարականները՝ իր ցոյց տուած ջանքերը Ֆրանսայի վերջին մեծ պայքարներու ատեն, քաղաքագէտները և մասնաւորապէս Հայերը՝ Փրօ Արմենիաի մէջ իր խաղած դերը :

Ինձ վրայ ամէնէն աւելի ազդած է իր բնաւորութիւնը, իր մարդը, իր խակական եւրոպացի լինելը :

Երբ սրանից տասը տարի առաջ, մառախուղ գարնանային մի օր, մեր ընկերներէն մէկի՝ բժ. Լ. Մ. ի հետ առջի անգամ ես պատահեցի Քիյեառին—մնացի մի քիչ հիասթափւած : Յածը հասակով, մեղմ շարժումներով, համեստ արտաքինով մէկն էր որ կը ներկայանար : Չը կայի՞ բարձր հասակը, վառվուն աչքերը, տաք շարժումները ու ոգեւորուած խօսքը, որ կը սպասէի ես «գաղափարական», «մեծ» և «պայքարող» մարդուց :

Ս. լուպիսի տպաւորութեան չին վարժեցրած՝ Ռուսաստանի, մանաւանդ Արեւելքի այլանդակութիւնները : Բանաստեղծը պիտի լինէր անպատճառ երկար մաղերով, «Ներոսը» տիսուր դերասանների նման «մեծ միծ» և «լուրջ» բաների մասին խօսող, «յեղափոխականը» պիտի աջ ու ձախ զարկէ, առնւազը ոգեւորէ կամ հայնոյէ ...

Այս հիւանդու և սիսալ իմ տպաւորութիւնները

միանդամ ընդ միշտ խորտակւեցին եւրոպայի մէջ, և Փարիզ, ուր առիթն աւնեցայ մի քիչ շփուելու եւրոպացի մի քանի ականաւոր անձերու՝ մանաւանդ Քիյեառի հետ : Լուռ և մեղօտիկ աշխատանք, պարզ և համեստ նիստ ու կաց, քաղաքավարի վերաբերմունք դէպի «հակառակորդները», ծայր աստիճանի յարգանք և ուշադրութիւն դէպի խօսակիցը, ծայրայնդ զգուշ վերաբերմունք դէպի դրամական խնդիրները :

— Ահա այն դեղէցիկ, գնահատելի . իսկական մարդկային, քաղաքակրթական յատկութիւնները որ դիտեցի ևս եւրոպայի գաղափարական ականաւոր անձերի մէջ, Դրանցից մէկն էր և Քիյեառը :

Մեզ մօտ եւս անշուշտ կան գնահատելի, արժանիք ունեցող անձեր, նոյնիսկ իրենց կարգին մէջ «հերոսներ» : Սակայն Արեւելքն ու հայութիւնը դեռ եւս շատ ցած են, որպէս զի իրենց «մեծ» մարդիկը ունենան վերը նշանակւած յատկութիւնները : Արտաքինը, ձեւը, մակերեւոյթը, թեթեւութիւնը իշխում է դեռ եւս մեզ մօտ, արտայայտում նոյն իսկ ամենահեղինակաւոր անձերի մէջ : Մենք հեռու ենք, շատ հեռու եւրոպայէ, Քիյեառներէ :

Հարկաւ, այդ բարձր, իսկական քաղաքակրթւած եւրոպացիները երկնքից չեն իջել, մօր արգանդէ չեն ծնւել : Մտքի պարզութիւնը, բարձրութիւնը, մարդկային գաղափարականութիւնը արդիւնք են սերունդների աշխատանքի, երկար պայքարի՝ կեղծի, փքունի, շնծուի, դրամապաշտութեան դէմ :

Կասկած չկայ որ մեզ մօտ եւս նոյնանման աշխատանքն ու պայքարը կուտայ նոյն դրական արդիւնքը : Սակայն, ո՛չչափ տարիներ կ'անցնին, որչափ արիւն կը թափուի դեռ եւս՝ որպէս զի մենք համենք այդ օրին...

Մենք չինք տեսնելու այդ օրերը... Զենք կարող տեսնել, բայց կարող ենք դէմ խոնարհել, ներշնչել

Քիյեառներով որ օրինակ եղան մեզ՝ մարդկային լայն  
գաղափարականութեան, բարձր քաղաքակրթութեան ու  
արտաքինի պարզութեան, մտքի բարձրութեան ու ման-  
կական պարզամտութեան :

Յարգանք մեռած Քիյեառին, ողջոյն կենդանի  
Քիյեառներին . . .

Ս. ԶԱՒԱՐԵԱՆ

## ՄԱՐԴԱՍԷՐԸ

Տիկիննե՛ր, Պարոննե՛ր,

Եթէ մաքուր և անստգիւտ՝ կեանք մը՝ ամբողջովին  
նուիրուած ճնշեալ մարդկութեան, եթէ վեհանձնու-  
թիւնը, անձնուիրութիւնը, անշահախնդրութիւնը՝  
որոնք, հակառակ հրապուրանքի բոլոր փորձերուն և բո-  
լոր սպառնալիքներուն, կ'արտայայտուին անխախտ կեր-  
պով, եթէ գեղեցկի պաշտամունքը, եթէ արդարութեան  
և բարութեան իտէալի մը յարատե, քաջարի և յաճախ  
յաղթական հետապնդումը արտայայտութիւններ ևն ո-  
րոնցմով մարդկութեան բարերարները կը ճանցցուին,  
բոլորս ալ պիտի ըսենք որ — ապահով եմ ասոր—մարդը  
որուն ա'յնքան վաղահաս, ա'յնքան անակնկալ անհե-  
տացումը կ'ողբանք, ատոնց ամէնէն մհծերէն մէկն էր :

Ուրիշներու կը թողում ներբողել փափուկ բանաս-  
տեղծը, հիանալի նորաբանը, ներդաշնակութեան ստեղ-  
ծագործողը, որ էր Փիէռ Քիյեառ : Ես պիտի ըսեմ որ  
անիկա երեք կիսովին չէր նուիրուեր մարդասիրական  
գործերուն որոնցմով կը շահագրգռուէր իր շքեղ և աս-  
պետական ոգին : Իր հոգին ա'յնքան մեծ էր որ բոլոր  
մեծ դժբախտութիւնները տեղ կը գտնէին հոն, խանդա-  
զատանքով լնդունուելու համար . կազդուրուելու, ու-  
ժեղանալու և պաշտպանուելու համար բոլոր արդարա-  
գ տութեանց առջև և բոլոր միջոցներով, աշխոյժ տրա-



մաղրութեամբ, անխոնջ ժրութեամբ, կորովով և յա-  
մառութեամբ;

Խնդիրը Արեւելքի վրայ ըլլար թէ Արեւմուտքի,  
Ֆրանսայի թէ արտասահմանի, ժողովուրդներու թէ  
անհատներու վրայ, Փիէռ Քիյեառ, ամէնուրեք և ամէ-  
նուն համար, էր ախոյեանը իրաւոնքի և քաղաքակրր-  
թութեան սկզբունքներու:

Այնքան գործերու, ճիգերու և աշխատութիւննե-  
րու մէջ որոնք Փիէռ Քիյեառին կ'ապահովին հանրային  
երախտագիտութիւնը, չկայ ուրիշ հաւասար մը այն  
բաղմամնայ պայքարին, որ ան տարաւ ազատելու հա-  
մար Հայերը, զոհեր հալածանքներու ամէնէն վատթա-  
րին և ամէնէն բոնապետականին: Այն անմոռանալի  
պայքարը որուն մոռնակցեցան Ժօնէններ, Փոէսանսէ-  
ններ, Քիէմանսօններ, Անաթօլ Ֆրանսներ, և ա'յնքան  
ուրիշ բարձր միտքեր որոնց համար այսօրուան և վաղ-  
ուան Հայերը կը զգան և պիտի զգան անհուն երախ-  
տագիտութիւն մը, այդ պայքարը իր նպատակին հա-  
սաւ: Այդ պայքարը իր նպատակին յանդեցաւ չնորհիւ  
մեր ազգային յեղափոխութեան հերոսներու ջանքերուն,  
Սահմանադրութեան, այսինքն՝ ազատութեան, ար-  
դարութեան և հաւասարութեան սկզբունքներու հաս-  
տատումով: Եւ երբ նոր ուժիմի արշալոյսին Փիէռ  
Քիյեառ Պոլիս եկաւ, մեր մէջ գտաւ այն ընդունելու-  
թիւնը որ հին դարերուն վերապահուած էր վեհանձն  
յաղթականներուն:

Բայց Քիյեառ չէր դադրած իր ամբողջ հոգիովը  
շահագրգռուելէ մեր երկրով, Հայերով լնչպէս միւս  
Օսմանյիններով, որոնց ճակատագիրը չէր բաժներ Հայե-  
րու ճակատագրէն: Եւ երբ Թուրքիա, հակառակ ամէն  
արդարութեան, յարձակում կրեց օտար պետութենէ մը,  
Փիէռ Քիյեառ ոտքի եղաւ: Իրէն հետ ոտքի ելան նաև

Փոէսանսէնները, Ոոււանէնները, Լոնկէնները: Ի ներկայու-  
թեան ամբողջ համախմբուած ժողովուրդի մը, անոնք  
բողոքեցին իրաւունքի բոնաբարման դէմ:

Եւ սակայն, այս սիրտը որ այնքան բարախնեց տա-  
ռասպող մարդկութեան համար, մաշած էր: Փիէռ Քիյ-  
եառ շիջեցաւ՝ թողլով մեզ ամէնքս՝ հասարակաց և խո-  
րին վշտի մը մէջ, որ խառն է մեծ ապշութեամբ մը:

Փիէռ Քիյեառ մեռած է: Բայց իր յիշատակը կայ և  
պիտի մնայ: Իր անունը պիտի օրէնուի և ոգեկոչուի  
աւելի քան չորս միլիոն ողջ Հայերու կողմէ, և բոլոր  
ապագայ Հայերու կողմէ, որոնք զայն իրարու պիտի  
փոխանցեն սերունդէ սերունդ:

Տիկիններ և Պարոններ,

Կը կարծեմ հաւատարիմ թարգմանը եղած ըլլալ ձեր  
զգացումներուն՝ Քիյեառի համար մեր զգացած սէրն ու  
հիացումը յայտնելով իր պատկանած երկրին, իր մեծ  
երկրին որուն զաւակները միշտ յառաջապահը եղած են  
արդարութեան և քաղաքակրթութեան շքեղ գործերուն,  
նոյնպէս և իր սգաւոր այրիին, այն կնոջ որ մասնակից  
էր իր հոյակապ ամուսնոյն բոլոր աշխատութիւններուն,  
բոլոր աշխատութիւններուն, բոլոր իղձերուն, այնքան  
բարի այս կնոջ՝ որուն տունը բոլոր Հայերուն ինչպէս և  
բոլոր Օսմանյիններուն համար, միշտ բաց ապաստան մը  
եղած էր:

Պ. ՀԱԼԱԾԵԱՆ

## ՔԻՅԵԱՌ ՄՏԵՐԻՄ

Անգամ մը եւս պէտք պիտի ըլլար, սգաւորի մը՝ յաղթել իր յուզումներուն՝ գծելու համար Քիյեառը իր մտերմութեան պահերուն, այն դէմքը որ ինչպէս գեղեցկօրէն ըստ Զօհրապ, Ազատամարտի մէջ, «միայն լոյսով է գծուած»:

Այդ դէմքը վեշտասնամեայ կոյսի մը դէմքին չափ վճիտ էր: Ոչ մէկ թագուն գիծ: Ոչ մէկ ներքին ձայն որ իր զմայլելի աշքերուն յակինթին մէջ չի ցոլար:

Քիյեառ, ինքն իր հոգիին հայելին էր:

Քիյեառ ներդաշնակութեան մարմնացումն էր:

ՈՒԻ Քիւժաէն յետոյ ՈՒԻ Մօսիէօ լը Փրէնս, ուր «Փրօ Արմենիացն իր խորանը դրաւ, իմ յաճախաղէպ հանդիպումս քրմական բանաստեղծին՝ ինձի շունչ կուտար մէկու մը նման որ կարծես տիեզերքէն որբ՝ յանկարծ յաղթական յոյսի մը մէջ եղապարութիւն մը կը զտնէ . . . : Մէկու մը նման որ իր Հայրէնիքին հեռաւոր մոխիրներուն վրայ քալել կարծելով՝ կը յառաջանայ պտղալից ու զով այգիներու կանանչ յնորքին. . . : Մէկու մը նման որուն աշքերը իր Ցեղին արիւնը կը տեսնեն և որուն, Քիյեառ մը, նորէն յոյսի և հպարտութեան շուշանը կ'ընծայէ . . . : Մէկու մը նման որ իր ապարդիւնօրէն ըմբռատ երգերը կը հիւսէ, և որուն մեծ միսիթարիչը կ'ըսէ. «Մինակ չէ՞ք»:

Փրօ Արմենիակի ցոջանէն դուրս շատ անգամ Քիյեառին պատահիլը Sainte-Genevièvè-ի կամ Nationale-ի գրադարանները, սովորական բան էր: Ի՞նչ ընկլու կ'երթար Քիյեառ այս հսկայ հաստատութիւններուն մէջ: Իր հելենագէտի հմտութիւնը սնուցանելո՞ւ: Երբեք: Անիկա գրադարան կ'երթար վիտուելու, խուզարկելու, քննելու հայ պատմութեան մասին զրուած ո և է բան: Կը կարդար եւրոպական երեք լեզուներով ինչ որ կար զրուած մեր մասին, Լինչ, Լանկլուա կամ Հիւալման և քանիներ:

Իր Quinzaine-ները Փրօ Արմենիաին մէջ՝ անհաւասարելի ուժգնութեամբ զրուած յօդուածներ են և իրը այդ՝ բառին Էն շքեղ իմաստովը, զլուխ-գործոցներ: Աւելորդ է թերեւս յիշել թէ թերթին բոլոր տօքիւմանները, թղթակցութիւն, վիճակազրական տեղեկութիւններ՝ Դաշնակցութենէն կուգար, «Դրօշակ»ի միջոցով: Իր թարգմանիչները, ուսանողներ՝ յաճախ իրենց ձեռքը ունէին երկիր բուրող նամակները, որոնք ժընէվ երթալէ առաջ Քիյեառին կը համանէին: Ինչ յուզումներ էր որ կը նկարուէր «լոյսով գծուած» դէմքին վրայ, ինչ մահացու տրոմութիւն որուն համար լաւ է որ չէք ճանցած զինքը . . . : Եւ յաճախ ինչ հերոսական խօսքեր և ինչ ժափտ զորս վայելած չըլլալնիդ ապարախտ կորուստ մընէ . . . : Եւ հայ ուսանող թարգմանիչը, ո'վ ալ ըլլար այդ անձնուէր աշխատութիւնը բերողը, չի յուզելու համար արիւնի և սարսափի լուրերէն՝ Քիյեառ պատրուակ մը գտնելով կ'ընդհատէր ընթերցումը կամ իր բարձր իմացականութենէն բղխած ֆրազով մը ամէն բան մոռցնել կու տար . . . :

Քիյեառ իբր մտերիմ՝ մարդ՝ գորովի, քաղցրութեան, և բիւրեղէ աղապատանքի աղբիւրն էր:

Քիյեառին կորուստը հայութեան համար մեծ կո-

ըրուստ մըն է , բայց Քիյեառ մեռնելով՝ իր մտերիմներէն ալ բան մը մեռցուց , այնպիսի բան մը որ միայն բարեկամութիւններուն էն իմացականը և էն վճիտը կուտայ , բան մը որ լուսէն և վայրկեանը կ'ընծայեն , բայց և այնպէս աւելի յաւիտենական է քան ուրիշ ո և է Սէր . . . :

ՄԻԱՄԱՆԹՈ

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՐԴԸ

Սուգը՝ որով կը յարգենք անմոռանալի Քիյեառի յիշատակը , մինակ Հայունը չէ , այլ և բոլոր այն ճակատագրական աղքերուն , որոնց ուսերուն վրայ դեռ կը ծանրանայ հակամարդկային անիրաւ լուծը , լեհին , Ֆինլանտացին ալ՝ որոնց արդար դատին սպաս դրաւ համակրելի Մրանսացին իր թեւաւոր գրիչը , իր մաքուր երեւակայութիւնը , իր սրբազն աւիւնը և զայրոյթը :

Եթէ ան ամէնէն աւելի հայ դատին նուիրուեցաւ և ճգնեցաւ , անոր համար էր որ Արեւելքը մօտէն չնշած ու զգացած էր , անոր մահաշչուկ ստուելմներուն մէջ չափած էր հայ երխտասարդութեան մէջ պտոյտ եկող յոյզերը և առոյգ ու կենասաւէտ ձգտումները : Իր քերթողի ու վեհանձն մարդասէրի վսեմ պատրանքները , իտէացումները կը ժպաէին ժողովուրդի մը , որ ըմբռստութեան հզօր կայծերը ունէր իր մէջ ու թուիչներ և որ Կ'ուզէր կեանքը ապրիլ լիօրէն :

Ազգային հասարակ ու պատմական դատ մը չէր միայն որուն արիւնկրակ սլայքարին մէջ կը նետուէր Քիյեառ իր բոլոր սրտով ու հոգիով և յարգանքով , այլ Արեւելքի կարմիր հորիզոններուն վրայ կ'ընդնշմարէր գաղափարի կոյս ուժ մը՝ որ յորդ էր ելեկտրականութիւնով , երազներով ու համամարդկային իտէալներով և որ կը հարկադրէր հայ ցեղին արտասուաթոր պատմութիւնը :

Քիյեառ՝ Արեւելքի մէջ մնծ գիւտ մը ըրած էր կամ  
Արեւելքը գտած էր։ Հայ վերածնող ոգին խանդավա-  
ռեց զինքը և իր վեհանձն առաջելութեան ամբողջ մի-  
ջոցին, երբ հայ ժողովուրդը կեսնքի ու լոյսի բոցերը  
ու ցնցումները կը պատաժնէր Արեւելքի մահաթմութեան  
մէջ և մեծ «Ոչ»ը կ'արտասանէր անամօթ բռնակալու-  
թեան ճակտին, ան աւելի ու աւելի սրտապնդուեցաւ,  
դաւաներով հայ ցեղը Արեւելքի լուսաւորութեան անվե-  
հեր ու վճռական զինուորը և ռահվիրան, և որուն հայ-  
րենասիրութիւնը անդիմադրելի ջիշ մը ունէր ազնիւ։

Գաղափարի մարդը հպարտ կը զգար կոռուելով ար-  
ժանաւոր ժողովուրդի մը համար որ հերոսական մէստեր  
ու անկումներ ունէր և չէր ուզեր մեռնի։

Զէ՞ որ այն ժողովուրդները միայն կը մեռնին որ  
իտէալ չունին . . . .

### Ս. ՄԻՆԱՍԵԱՆ



## ՄԵՐ ՔԻՅԵԱՌԸ

Իրենից սովորեցինք այդ գեղեցիկ արտայայտու-  
թիւնը՝ ուղղուած Քրիստափորին՝ նրա եղերական մահ-  
ւան առթիւ . . .

«Մեր Քրիստափորը» .

Ու այսօր նոյնպիսի շմեցուցիչ անակնկալ ու ոչ  
պակաս հարուած մեր ցաւերով բենաւորուած կեանքին .

«Մեր Քիյեառը» . . .

Հայկական հարցի հետ առնչութիւն ունեցող տիտուր  
դէպքերը բոլորն էլ անակնկաների շարան են եղած, և  
միշտ հարուածը եկած է այն միջոցին, երբ ոչ ոք մըտ-  
քով չէր անցնել։

Ո՞վ կարող է չափել մարդկային խղճի խորութիւնը,  
և ո՞վ պիտի յանդգնի կրկնել թէ՝ օսար միւս օսար է :  
Չափեցէք, եթէ կարող էք, խիղճը մեր արիւնով շա-  
զախուած ու ծախուած այնքան Հայերին՝ սկսած Մեհ-  
րուժնից մինչև մեր ժամանակակից ախուր դէմքերը։

Ո՞վ ասաց թէ՝ Հայը միշտ է Հայ :

Թիւրքիայում դեռ սահմանադրութիւն չկար,  
Ժընեվ՝ մեր հիւրն էր Քիյեառը, Փողոցով գնում  
ենք : Խօսքը գառնում է Փրո Արմենիայի ազդեցու-  
թեան մասին Ֆրանսացիների վրայ : Արդեօք հետա-  
քրրքրւում են մեր հարցով, Փրո Արմենիան կարդում են :  
— Գիտէ՞ք, մեր ջանքն ու աշխատանքը մշտական

բախումի մէջ են այն ընդհանուր կարծիքի հետ, որ կայ հայ վաճառականների նկատմամբ : Շատերն ինձ խար-ուած են կարծում հայ ժողովրդի արժանիքների նկատ-մամբ . և քանի որ հայ գիւղացին և հայ աշխատաւորը չափում է Եւրոպայի, Եգիպտոսի կեդրոններում հաս-տատուած հարուստ ու անտարբեր անհամներով , շատ դժուար է ընդհանրութիւնը շահագրգուել ձեր հարցով : Համակրութեան պակասը դրան պիտի վերագրել : Ձեր երկիրն հեռու է և այնտեղ տառապող ու խաչուող իս-կական Հայը , որ իր անդուլ պայքարով ու կամքի . կո-րովի առնականութեամբ հայութիւնն է ներկայացնում , անծանօթ է Եւրոպացուն : Տուէք մեզ այդ կեանքը ինչ-պէս որ է . հեղինակաւոր գրի նիւթ դարձրէք , արտա-տըսկեցէք , ցրտեցէք բոլոր երկիրները . թող տեսնեն և հասկանան ձեր իսկական պատկերը :

Այսպէս էր խօսում , դառն վշտի բեռը իր կրծքին , մեր Քիյեառը :

Իրաւունք ունէր :

«Նիւթ տուէք , նիւթ . Փրո Արմենիան տարածուե-լու համար , Հայաստանի կեանքի պատկերը դառնալու է նա» : Այս մտքով էր գրում նա շարունակ :

Եւ իրաւ . զնացէք և քրքրեցէք Դրօսակի արխիւու . բազմաթիւ նամակներ՝ Քիյեառի ստորագրութիւնը կրող : Բոլորի մէջն էլ նոյն հարազատ սրտի թրթիուը կը կար-դաք : Ամէն մի փոքրիկ դէպք Հայաստանի մէջ՝ արձա-գանգ՝ ունի նրա քնքոյշ հոգում , ամէն մի ոճիր Հայի դէմ իրեն արժանի ցասումն ու պոռթկումը :

Իսկ երբ հայ յեղափոխականի յաջողութեան մասին է խօսում , ո՞րպիսի գուրգուրանք , ո՞րպիսի փայփայանք դէպի հայ Փէդային : Ոյժի ու կարողութեան մրմունջ է դա՝ ուղղուած հեռաւոր Հայաստանի բարձունքում կը-ող ու ընկնող քաջարի բազուկին :

Օտար չէ , մերն է , մերը այդ թրթուացող , այդ ազ-նիւ սիրաց :

«Մեր Քիյեառը» :

Թող որքան կ'ուզէ , յայտնի գրող լինի Ֆրանսայի համար . գրանով չէր մեծ նա : Ֆրանսայիան անթիւ զրո-ներ ունի . և շատերը շատ աւելի անուանի :

Բայց մենք մի Քիյեառ ունէինք . ուրիշ էլ չը կայ : Մեր բարեկամը , մեր ընկերը , մեր վշտին վշտակիցը , մեր ժալիտին իննդակիցը :

Մերն էր նա :

Գաղափարներով նոյնացած , մեր զգացմունքներով տոգորուած , մեր սրտերով կոփուած , ջարդերի հանդէպ մեր սարսափներով մկրտուած — մերն էր նա :

Ու այսօր հայկական պանթէօնի մէջ մի փառաւոր դէմք է յայտնուած այդ յանկարծական մահով , —

Մեր Քիյեառը :

ՄԱՐ

## ՊԻԷՐ ՔԻՅԱՐ

(Մահուան տարեդարձի առքիւ)

Բոլորեց տարին ցաւի ու կսկիծի, անփոխարինելի կորուստի—Պիէր Քիյարի մահուան :

Մի տարի առաջ էր, ձմեռուայ խստաշունչ օրերին, երբ հեռագիրը բօթեց Քիյեարի մահը : Սնհաւատալի՛... Սնհաւատալի՛, գէթ չափաղա՞նց վաղաժամ՝ իւր առողջ կազմի, կարմիր զրիների, անխոնջ աշխատանքի ուժին ու տոկունութեանը, անմեղութիւն բուրող դիմագծին, խորը նայող ու թափանցող նայուածքին, ըմբոստ չնշին ու բարութեան հայելի անձին համար :

Առաջին անդամ Լօնգէի միջոցով ծանօթացայ նրան, Պարիզ : Չեմ յիշում, թէ արդեօք մի բառ գտա՞յ իմ զգացածները արտայայտելու, բայց յիշում եմ որ համակ պատկառանքով, պաշտամունքի լուռթեամբ հետեւում էի իրան, հետիուն : Գնում էինք տպարան : 1903ի ամառուայ «Պրօ Արմենիա»ի համարներից մինն էր շարւում, և Քիյար ծնողական գուրգուրանքով, ո՞չ միայն խմբագրելով՝ այլև շարուածքին ու տպագրութեանը հսկելու հոգն ունէր :

Եւ նա, որպէս վաղեմի բարեկամ, որպէս վաղեմի մտնրիմ, ճանապարհին՝ անհատնում ասելիքներ ունէր : Պատմում էր մեր ցաւերից, հաղորդում էր երկրից ստացուած տեղեկութիւնները, խորհրդածում էր Ռու-

ստաստանում պատրաստուող յեղափոխական մեծ շարժումին վրայ, խօսում էր մեր կուսակցութեան անդամների, տակտիկայի մասին, միշտ համեմենով խօսքը քաջալերութեան, յոյսի ու հաւատագի չունչով :

Անցան տարիներ: 1908ին էր. նա էլ եկել էր տեսնելու վլատակները՝ իւր խարազանած կարմիր Գաղանի ըժմիմին: Նա էլ եկել էր ողջունելու և տօնելու օսմանեան, ո՞չ, բանակի համբաւաւոր Յեղափոխութիւնը և վերյայտարարուած Սահմանադրութիւնը :

Բայց նա փառքի ու տօնի մարդը չէր: Սշխատանքի մարդն էր: Եկել էր անձամբ ստուգելու, թէ իրապէս հաստատուած էր Սահմանադրութիւնը, կը գանուէ՞ր արդեօք իր աշխատանքի բաժինը՝ շնութեան հաստատուն հիմնարկէքի համար: Տեսաւ մեր պատրանքը, զգաց մեր տարակուսանքը, ու մեկնեցաւ:

Մեկնած օրը, երբ հրաժեշտի վերջին խօսքն ասաց ինձ, աչքերս լեցուեցին: Բառ չգտայ արտայայտելու իմներքին մտատոչորութիւնը :

— Սրի՛ Պարիզ ու ինձ տե՛ս, ասաց ու հեռացաւ:

Գնացի: Գնացի ու տեսայ քանիցս, երբ իմ մէջ հաւատը մեռած էր, բայց նա ճգնում էր այդ հաւատը ոտքի կանգնեցնել նոր սերունդի միջոցով: Ու ո՞րպիսի հոգածութեամբ էր խօսում նա Պարիզեան թուրք ուսանողութեան մասին: Մի ցանկութիւն ունէր.— մենտորը մնել թուրք ուսանողութեան, իւր ձեռքովը կազմապարել մեր երկրի ապագան: «Լաւ են աշխատում, սովորում են, բայց առաջնորդ չունին», ասում էր Քիյար: Իսկ այդ ուսանողները յանձնուած էին իւսուֆ Քէմալի, Ատանայի Պարլամենտական Քննիչ Յանձնախմբի թուրք անդամի մնատորութեանը . . . :

. . . Տեսայ ես նրան փոշիով ծածկուած, ալեխառն ու յոդնած: Նոր Դրէյֆիւմների պայքարի օրերին էր:

Պիէր Քիյար ո՛չ միայն «Մարդկային իրաւունքների» թերթին էր աշխատակցում, այլ և անդամն ու քարտուղարն էր «Մարդկային իրաւունքների Լիգ»-ի, որին Նախագահն է Պրէսանսէ : Քիյար՝ Պրէսանսէի աջ բազուկն էր: Երկուսը միասին ֆրանսայի շրջանն էին կատարում, անմեղ Դրիմոնի դատապարտութեան վճիռը վերաբնութեան ենթարկել տալու, անմեղ դատապարտեալին բուրժուական — դեմոկրատիայի անարդարութիւնից փրկելու համար:

Բուրժուա — դեմոկրատ Հանրապետական ֆրանսիայի մէջ, Գաղութներում թէ Մայր Հայրենիքում, չէ եղած ոչ մէկը՝ զինուրական իշխանութեան զոհերից՝ որ Քիյարի աչքերով, Պրէսանսէի զրչով ու ձայնով «Լիգ»ի ուշադրութիւնից ու պաշտպանութիւնից վրիպէր: Նախարարական հաղածանքների ենթարկուող յեղափոխական դատափարակներից շատերն են պաշտպանւել ու հովանաւորւել նրանց միջոցով: Վարչական կամ դատական ճանապարհով, կավիտալիստի հարուածներին ենթարկուած համեստ ու պարտաճանաչ աշխատաւորները՝ պաշտպանութեան ու միխթարութեան ձայնն են լսել նոյն «Լիգ»ի որի յետեւում թագնուած է եղել անխոնչ աշխատաւորն ու համեստ մարդը: — Քիյարը:

Ճնշուածների դատը և ըմբոստացողների կոչն աշխարհի որ անկիւնից էլ դար, Քիյարի սրտի մէջ երբէք անարձագանք չը մնաց: Քիյար միայն մերը չէր: Նախ Ֆրանսիայինը, ու ապա՝ Ֆրանսիայից դուրս բռորին: Ու այս տագնապալից օրերին զգում եմ թէ՝ որքան մեծ պէտք ունէինք, աւելի քան պէտքը նրա խօսքին ու նրա խորհրդին...

Ամէն վշտակը, ամէն սրտի չէ՝ արւած իւր զգացածը՝ ամբողջ խորութեամբ հաղորդել լեզով կամ զրչով:

Իմ բաժինը լուր պաշտամունքն է: Կը ցանկայի միայն, իմ վշտակիր ընկերներին, Քիյարի յիշտատակն յարգողներին, մեր զրչի արուեստագէտներին, հայ մտաւորականութեան լաւագոյն տարրերին, և մեր նոր հասնող սերունդին հաղորդել իմ պաշտամունքի խոները.

— Քիյարները ծնւում են միայն ապրելու իրաւունք ստացած, այդ իրաւունքը պաշտպանող ազգերի մէջ: Քիյարները զաւակներն են այն աղգերի՝ որոնք, իրենց Հայրենիքին բաւելուց յետոյ, այնքան են մնանուած, որ այլեւս չեն պարփակում իրանց սահմանների մէջ ու համարում են ամէն տեղ, վշտակից են լինում տանջուող մարդկութեան բոլոր ցաւերին...

Այդ մեծութիւնը չափելու, ամբողջութեամբը ըմբռունելու համար, մենք մեզ բաւելու չափ՝ նրանցից ներշնչուած և հասունացած պիտի լինինք:

Տուէ՛ք մեզ Նոր Քրիստափորներ, մենք մեզ բաւելու և մինչեւ Քիյարներ բարձրանալու համար:

Այն ժամանակ անարձագանգ չեն մնար արձան կանգնեցնելու կոչերը, ու նիւթեղէն արձանների հետ հայութեան սրտի արձանները, մեզ բարձրացնող անմահ Քիյարի համար:

## ԹԱՐՄ ՇԻՐԻՄԻ ԱՐՁԵՒ

«Հայրիկ տես, տես, Աստղը բռաւ,  
Եսից պայծառ գիծ բռնից»...  
Միք. նալբանդեան

Մի աստղ էլ թռաւ : Հայ աղքատիկ երկնքի մի ան-  
կիւնը կրկին խաւարեցաւ :

Մեծ էր աստղը, փայլուն, զօրաւոր : Ընկաւ նա և  
ետքից պայծառ լոյս թողեց :

Նա ընկաւ մեր սրաերի վրայ : Ահ, այդ հայ սրտե-  
րը բզիկ-բզիկ եղած, ծէն-ծէն դարձած և նետուած  
ոտի տակ, ցուրտախ բերան :

Ընկաւ աստղը և Հայ Պանթէռնի մէջ մի նոր գե-  
րեղման ևս բացուեցաւ, գերեղմաններ, անթիւ, ան-  
համար գերեղմաններ : Իսկ փոքրաթիւ հայ ազգի հսկա-  
յական Պանթէռնը . մէկ ծայրը Սիրերի սաւցադաշտերը,  
միւս ծայրը մինչեւ Տիգրանակերտ, մինչեւ Աքիա, մինչեւ  
Թարապուզ : Մէկ ծայրը Վիտոշի լանջին՝ արծիւի բու-  
նի պէս նստած, միւս ծայրը Թէհրան ու Համադան : Ու  
շիրիմներն աղնիւ մարտիկների, ցրւած այդ հսկայական  
ովկիանի մէջ . փոթորկից քշուած աւաղի հատիկների  
չեն նմանիր արդեօք, որոնց կատաղօրէն տարել է հովը,  
ցրել «ծագաց ի ծագս աշխարհի» :

Այդ նիւթական շիրիմներից զատ, կան և այլ շի-  
րիմներ, կենդանի դամբարաններ մեր սրտերի մէջ :  
Պատուածքներ ևն նրանք մեր խոցուտուած սրտերում :

32

Ու այս նոր շիրիմն էլ եկաւ բազմացնելու մեր մը-  
խացող վէրքերի թիւը :

Մինչև այժմ մեր սրտերը յաճախ թռչում էին վան՝  
աննման Պետոն ու վազգէնը սգալու, ալանում էին Մա-  
րիցայի հովիտները՝ Քրիստովորն ու Վուամը լալու, Պե-  
տո Սիրեմձեանը, Սօկոլօվն ու Մարջանօվը ողբալու .  
սուրում էին միջնաշխարհ՝ երկաթը և վահան Մանուէլ-  
եանը, Խանն ու Սերոբը մղկտալու, աճապարում էին Կա-  
րին՝ Արամ Արամեանի և Թոփչեանի շիրիմներաւն ծըն-  
բազրելու . . . Իսկ այժմ : Այժմ մի ուխտատեղի եւս ա-  
ւելցաւ : Այժմ մենք պիտի վազենք Եփրեմի շիրմից —  
Թէհրանից մինչեւ Պարիզ, Կարենք Առաջաւոր Ասիան, Կո-  
խոտենք ամբողջ Եւրոպան, հասնինք մեր այս նոր Ուխ-  
տատեղին — Քիյարի թարմ շիրմի առջեւը :

Թափառէ, վազէ, թոփիր, պայցի՛ր, հայ սիրտ : Չուէ  
աշխարհէ աշխարհ . անծայր են ուխտատեղիներդ, ան-  
հուն է նահատակիներիդ գերեղմանատունը, անվերջ են  
պաշտամունքի թարմ շիրիմներդ : Յածէ, թափառէ և  
կապէ իրար այդ աստանդական շիրիմները, միատեղէ  
նրանց տակ պառկող վեհ սրտերը, նրանց խարազանող  
զգացումները : Բեր իրար մօտ, դարբնէ այդ զգացում-  
ներից պիրկ մի շղթայ և նրանով իրար շաղկապէ ամ-  
բողջ հայութիւնը : Վարժեցրու նրանց ծնրադրել այդ  
ցրւած գերեղմանների առջեւ, որպէսզի ամէն մի Հայ  
զգայ թէ ինքը Հայ է, հայ ազգի անդամ . թէ ինքը  
պարտաւոր է աշխատիլ այդ հայութեան համար, թէ ին-  
քը կարող է և պարտաւոր է իր դասակարգային շահերը  
պաշտպանել, կռւել իր կեղեքողների դէմ—լինին նրանք  
Հայ թէ թուրք, Ռուս թէ Բուլգար, բայց իրը Հայ նա  
պարտաւոր է հայ ազգի ամբողջութեան, նրա փրկու-  
թեան համար աշխատիլ :

Այդ պիտի սորվեցնեն մեզ մեր սրտերի խոցերը,  
մեր անհամար, սեւաբերան վէրքերը, երկնի աստղերից  
աւելի բազմաթիւ մեր շիրիմները :

3\*

33

Բայց ի՞նչ տարօրինակ է այս Նոր Շիրիմը։ Նա նը-  
ման չէ միւմներին։

Աւելի խոր, աւելի մեծ երկիւղածութիւնով ծնրադ-  
րեցէք նրա առջև։ նրա տակ հանգչում է վարդի պէս  
մի սիրտ, միջազգային մի վեհ սիրտ։

Հայ չէ նա, բայց երկա՛ր բարախեց հայութեան  
համար։

Հայասէր Քիյարն է թաղուած հոն։

Ո՞չ, ո՞չ . սխալւեցայ, հայ Քիյարն է թաղուած հոն։  
Նրա սրտի մէկ բաժինը հայ էր, միւս բաժինը միայն  
ֆրանսացի։

Ես էլ շփոթւեցայ. արդեօք կարելի՞ է սիրտը բաժ-  
նել մասերի։ Արդեօք նա նման չէ ճննապակէ թանկա-  
գին անօթի, որը եթէ երկու մաս եղաւ, այլևս ոչ մի  
գին չի ունենայ։ Արդեօք սիրտը նման չէ մի հրաշագեղ  
ջութակի, որ կը դադրի ճնչելէ, եթէ մասերի բաժնես։

Ո՞չ այդպէս։ Սիրտը մի հատիկ է. նա կամ կայ ամ-  
բողջութեամբ, կամ ամենեւին չկայ նրան բաժնել մասե-  
րի անկարելի է, բայց նա համայնապարփակ է. նա կա-  
րող է իր մէջ առնել — կամ՝ աւելի լաւ է ասել — իրա-  
նից արտադրել շատ, բազմազան զգացումներ։

Թողնե՞նք, թողնե՞նք այս թարմ Շիրմի առջև այդ  
նուրբ փիլիսոփայութիւնները։

Ծնրադրւնք։ Նրա տակ հանգչում է Թրանսայի  
վեհագոյն զաւակներէն մին, որ գիտցաւ Հայ լինել,  
տառապիլ Հայի ցաւերով, խնդալ Հայի ուրախու-  
թիւնով, լալ Հայի արցունքներով։ Իսկ ի՞նչ է ասել  
Հայ լինել։ Մի՞թէ ազգի մի անդամից աւելին է պա-  
հանջւում, քան այն ինչ որ Պիէր Քիյարը արեց հայ ազ-  
գի համար։ Օ՛, երանի թէ ամէն մի Հայ նրա կէսի, նրա  
կէսին կէսի չափ հայութեան համար աշխատէր . . . Այժմ  
վաղո՞ւց դադրած կը լինէր մեր լայը, մեր կականը։ Այ-

ժըմ վաղո՞ւց մեր աղդային ամբողջութեան ապագան  
վառ արշալոյսի պէս փայլած կը լինէր մեր առջև։

Ծնրադրւնք թարմ Շիրմի առջեւ։ Սովորենք նրա-  
նից աշխատիլ տառապողի համար։ Սովորենք նրանից  
թեթեւզնել ուրիշների խաչի ծանրութիւնը։ Սովորենք  
սրբել ուրիշներու արցունքը։

Ծնրադրւնք, ծնրադրւնք։ այդ Շիրմի մէջ է հայ  
ազգի սրտի մի կտորը — Պիէր Քիյարը։

Ա. ԱՐԾԻՒՑԱՆ

ՀՅՈՒՅՆ

## ՀԵՐՈՍԱԿԱՆ ՌԻ ՑԱՀԱԳԻՆ •ՔԻՉԵՆՍ.ԹԱՅ

~~~~~

Ան որ, վճիտ բարութեան ու ծիրանի քաղցրութեան մէջէն, «Հերոսական ու ցաւագին Բնարը» երգեց, ինքն իսկ չէ՞ր միթէ՝ հերոսական ու ցաւագին Քիյեառը՝ ահաւասիկ մեծ հերոսութիւններու և մեծ ցաւերու տարփանքին վրայ շիջելով ի վերջոյ։

Իր հոգին, հելլէնական սրբատաշ կատարելութիւններու ցոլք, եղաւ նաև արիւնոտ արդարութեան փարում մը, և երբ, գեղեցկութեան մը պէս կը կազմակէր ան արցունք առ արցունք, եղաւ նաև անընդհատական փայլատակում մը կարմիր զայրոյթի շողիւններու, ինչպէս սուրբ իր «Թափառուհի»ին, որ, «գէպի արեւելեան դաշտերն ու քաղաքները կ'ընթանար, միայնութեան մէջ ապառնի պայքարները երգելով», և «իր Բանը, զաղնջական վերջալոյսը պատոելէն, ծիրանի հոգի մը կը փչէր գերի հոգիններուն»։

Սնոր համար որ, մշտապէս յաճախուեցաւ ու փոթորկեցաւ ան արիւնի ու կրօպի մեծ գեղեցկութենէն որ Հայաստանի և բոլոր Հայաստաններու տառապանքն էր ու անոնց նշկանումները, — և մարդերուն տրուեցաւ տեսնել գեղեցկութիւններու և արդարութիւններու խորանին վրայ ինչպէս լուսելէն մշտարթուն աչք մը՝ իր վառիը, հեւալը, գալարուիլը, և յետոյ, աւա՛ղ, աւա՛ղ, իր շիջլը։

Սգա՛նք, եղբայրնե՛ր, հերոսական ու ցաւագին շի-

ջումը լուսելէն մշտարթուն աչքին՝ գեղեցկութեան ու արդարութեան խորանին վրայ։

Եւ յիշե՛նք, թէ ի՞նչպէս եղբայր էր ան, բարի ու վեհանձն օտարականը, մեր հոգիններուն — մեր տանջանքին, մեր սուգին, մեր մեռելներուն, մեր մարտիկներուն, ան՝ որ, մեր յուսահատութեան գիշերներուն, մեր դուռներուն բախեց յոյսի ու միխթարութեան ուռնակը։ Իր նայուածքը՝ պշնած վիրաւոր Արեւելքի մը տուամերգութեան, երազային իրիկնայգի մը պէս կը քաղցրացնէր մեր մթին հորիգոնը։ Մեր յուզումները՝ իր էութեան անապակ բիւրեղին մէջ կը փրփրէլն վարդաթոյր եռքով մը, — ի՞նչպէս եղբայր էր ան մեր հոգիններուն։

Ասոր համար, Հայաստանի տառապանքին իր ընծայաբերումը՝ եղաւ իր երկրորդ «Հերոսական և Ցաւագին Բնարը», իր երկրորդ մեծ ու անտիպ բանաստեղծութիւնը՝ այլեւս քանդակուած Հայաստանի սրտին մէջ։ — Կարդա՛նք, եղբայրնե՛ր, երկիւղածութիւնը մեր հոգւոյն մէջ, մեծ բանաստեղծութիւնը Հայաստանանուէր, մեր արիւնոտ տառապանքներու ջահերուն լոյսովը։

... Եւ ահա, յաւերժութեան մէջէն կոթողացած՝ Հերոսական ու Ցաւագին այս նոր Բնարը, զոր հերոսական ու ցաւագին Քիյեառը, գեղեցկութեան ծոցէն ճնած երգիչ ու ռազմիկ, ապրեցաւ իր խանդաղատանքին մէջ գէպի վաղնջական ցեղի մը տաժանագին յառնումը։

Եւ Հայաստանի որդիներն են վաղուան ու միւս օրուան, որ կ'երգին, իրեն հետ։

Մոլեգիններ մենք՝ որ երբեմնի խաւարներէն, Մուալլ ու սեւ երկենքին մէջ ժայթեցուցինք՝ Կատաղի արշալոյս մը՝ դէպի կաղնիներու կատար, Եւ իյու՝ տենչանքի եւ յոյսի աղաղակին, Կը ընչենք ուրախութեան կարմիր վարդերը, Յորմէնետէ որ, զիւերուան բակարդները դերեւելին, Զահը՝ սուրին հետ մեր բունցին մէջ՝ կը բոցավառի։

ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԱԱՆ

## ԱԽՈՅԵԱՆ ՄԸ

Մեր բոլոր ուժով մենք պիտի  
շարունակենք, ձեզ հետ և ձեզ  
համար, կախը, խօսքով և գրի-  
չով, և երբ ժամը գայ, գործով,  
Փիէ՛ռ Քիշելի:

... Ու ահա մէկն ալ հղօր, անյողդողդ պայքարի,  
համամարդկային դատերու արի ախոյեաններէն, որ կը  
լուէ յաւիտենապէս :

Բնական գործունէութեան անսագորոյն վրիսկում մը՝  
ահա կ'ընկճէ այն թանկագին դոյութիւնը, որ իր դժն-  
դակ առաքելութեան, իր ամենի ոգորումներու ընթաց-  
քին, երբեք չը գիտցած դեղեւիլ կամ կասիլ կամ  
նահանջ մը փորձել :

×

Փիէ՛ռ Քիյեա՛ռ ...

Մենք մեր ճամբան կ'երթայինք արիւնաթաթաւ,  
քամակարել և կթոտ քայլերով . և ահա անսահման,  
ամենի ժայռի կուշտէն լսեցինք մտերիմ, եղբայրա-  
կան ձայն մը որ կ'ըսէր .

— «Ես ալ ձեզի հետ եմ . . . ,

Ու Քիյեառ մինչեւ վերջը մնաց մեզի հետ, մար-  
տընչեցաւ մեզի հետ այնքան խանդավառութեամբ որ-  
քան եթէ մեր շարքերուն մէջ եղած ըլպար : Ան ամէնէն  
տաղանդաւոր և անկեղծ մէկ ներկայացուցիչն էր նոր  
եղբայրակցութեան մը, գաղափարի ու պայքարի միա-

բանութեան մը որ ծնունդ առաւ մեր սարսափի օրե-  
րուն՝ խանութպան Եւրոպայի կողքին :

Փիէ՛ռ Քիյեա՛ռ . . .

Կէս հայկական անուն մըն է այս արդէն, այնքան  
ընտանի ուազմիկ երիտասարդութեան համար, ու ան-  
բաժան այն սերունդէն, որ ուահահորդն եղաւ մեր վե-  
րածնունդին :

×

Քիյեառ ամէն բանէ առաջ Քաղաքացին էր : Ան  
խանդավառ պաշտպան մը եղաւ հայկական դատին.  
որովհետեւ համոզւած էր թէ արդարութեան դատ մըն  
էր այդ, դատը՝ մարդկութեամ ու քաղաքակրթութեան :  
Ու միշտ ալ բարեկամն եղաւ նման բոլոր դատերու :

Ան կը զայրանար ու կը մաքառէր, ամէն անգամ  
որ բրաօրէն կը արորէին մարդկային և քաղաքացիական  
երաւունքները, իր ցասումը կ'աղաղակէր ամէն ուր որ  
տիտղոսի կամ դիրքի կամ փողի բննաւորներ՝ կը փոր-  
էին իրևնց գիշախանձ կամայականութեան ենթարկել  
անհատներ ու հաւաքականութիւններ :

Բանաստեղծ և զրագէտ, քննադատ ու մատենա-  
դիր, այդ հղօր իմացականութիւնը կը ներկայացնէր  
ներդաշնակ համաղըութիւն մը սրտի և մտքի . շքեղ և  
արու խոսունածք մը, որ այնքան բծախնդիր էր ար-  
ւեստի գերագոյն պահանջներուն համար, որքան անո-  
ղորմ՝ իր հերակեան պայքարներուն մէջ :

Անկախաբար զրչի գործունէութենէն, ան նւիրւած  
էր նաև տենդագին աշխատանքի մը՝ տարբեր արտա-  
յացտութիւններով : Ինք ալ, ինչպէս մեր թանկագին  
Քրիստովորը, կը կազմէր տեսակ մը շաղախ՝ բոլոր  
տրամադրելի ուժերը, բոլոր ընդունակութիւնները հա-  
մախմբերու համար որոշ դատերու շուրջը : կը կազմա-  
կերպէր միթինկներ, բանակցութեան կը մտնէր երես-  
փոխաններու կամ դիւանագէտներու հետ, անոնց օ-

39

ժամուգակութիւնը ապահովելու մտքով : Ու ինք միշտ մնաց բողոքի կենդանի ձայնը , անընդհատ խարանեց դրամատէր ու սովորիտիկոս Եւրոպային բարբարոս անտարբերութիւնը կամ ոճրապարտ մեղսակցութիւնը՝ հայկական ինչպէս պուլկարական կամ նման տագնապներու . չվարանեցաւ միշտ իր հեղինակութիւնը կապելու ամէնէն խոնարհ և յուսահատական դատերուն հետ : Համիտական սարսափիներու մոլուցքի պահուն , ինք էր որ հալածական , արիւնաքամ ժողովուրդի մը օտարալեզու սրտցաւ թարգմանը կը հանդիսանար մինչև նախարարական դահլիճներու մէջ : Փրո Արմենիա միայն մէկ մասն էր իր գործունէութեան , գրաւոր արտայայտութիւնը միջազգային համերաշխութեան իր պրօպագանդին : Սնոր դադարումէն ետքն ալ , իր սիրտը միշտ այս կամ այն ձեւով բարախնց թշւառներու ազատազրման համար : Վերջին անգամ , ինքն ալ մէկն եղաւ մոռաւորականներու այն թանկագին փաղանգէն , որ միջազգային ուշադրութիւնը կը հրաւիրէր կովկասահայ կալանաւորներու վիճակին վրայ :

×

Կը նօսրանայ փաղանգը . . . Հատ-հատ կը պակսին օտարազգի հուժկու դիմագծութիւնները որ գիտցան ըմբոստանալ «քաղաքակիրթ» Եւրոպայի նախնական , բարբարոս խղձմտանքին դէմ , մարդկային համերաշխութեան խօսքերը թնդացնել սպաշտօնական , ամրափակ սրահներու կողքին : Պերթլօ , Քիյեառ և դեռ աւելի խոնարհները , մաս կը կազմնն մեր ժամանակակից պատմութեան և մենք անոնց կորուստը կ'ողբանք այնպէս , ինչպէս պիտի սգայինք մահը եղբայրներու :

Հայ ժողովուրդը , մանաւանդ Երկրի հայութիւնը , եթէ հնարաւորութիւն չունի յիշատակի խորան մը կանգնելու իր օտարազգի բարեկամներուն համար , որ ան-

նենք վկաներն եղան իր մարտիրոսագրութեան , որ նոյն զարկով զգացին իր տագնապներն ու ցնցումները , և եղան՝ իրենց կարգին՝ մարտնչողներ իր գիւցանամարտի յաղթանակին համար , բայց բազէ մը իսկ չպիտի մոռնայ անոնց անուններն ու անոնց ձիգերը աւանդել իր որդիներուն և թոռներուն , իբրև համազգային սրտառուչ հէքեաթ մը :

Մենք յարգանքավ կը խոնարհինք այդ եղբայր-հոգիներու ածիւնին առջև :

ՇԱՀԱՐԾ ՄԻՍԱԳԵԱՆ

Կարին

40

41

## ՓԻԷՌ ՔԻՅԵԱՌ ԲԱՆԱՍԵՂԾԸ

A Madame Pierre Quillard

Փիէռ Քիյեառ մնկնեցաւ յանկարծ :

Իր հոգին խառնուեցաւ արդէն Գերագոյն Հոգիին ,  
ու իր հողակոյալ միայն՝ հեռաւոր աստղերու տակ ծաղկազարդուած՝ կը մնայ մնզի իր հոգիի դիմագիծերուն ու  
բանաստեղծի նըրաստուերին հետ , յատակ ու մարմարէ  
շրջադիմերով ու հելլէն ներդաշնակ տրտութեամբ խո-  
հուն , բացարձակ ու սիրելի անոնց համար , որոնք օր մը  
պիտի կարդան իր գործերը ու իր Գործին պատմութիւնը :

Յաւիսենական պայքարներու և պատրանքներու  
ծամբուն վրայ իր հերոսական վազքը կանգ առաւ յան-  
կարծ՝ բառերու մոգական արուեստը խօսեցուցած պա-  
վերջին խօսքը :

Լուինք ու այս խորհրդաւոր մնկնումին շուրջ պայ-  
մանադրական աղմուկներ չյարուցանենք : Ա՞ն որ գորո-  
վազին խոնարիութեամբ իջաւ մինչև տառապող Մարդ-  
կութիւնը , ան որ յալթուածներուն հեծքերը ու Վիշտին  
մտածկու լուռթիւնը սիրեց , չէ՞ր սիրեր կեղծ աղմուկը  
փառքին ու փառաբանանքին :

Իր բանաստեղծի դիմագիծը անկնծիու ու լուրջ է ու  
իր արուեստը պայծառ ու հզօր միանգամայն : Իր յոռե-  
տեսութեամբ մօտեցաւ Լըքօնդ Տը Լիլին : Բարբարու

Քերքուածներու կեղնակին պէս կրօններէն քաղեց եր-  
երգերը , ու զանոնք յստակ ու ոսկի լոյսով հագուե-  
ցուց , հաղորդելով անոնց հին աստուածներու բովանդակ  
ներդաշնակութիւնը : Քիյեառ կը կենայ Լըքօնդ Տը Լիլի  
ու Հանրի Տը Ռէնեկիէի ճիշտ մէջտեղը :

Նայեցաւ կեանքին այնպէս ինչպէս երեւոյրի մը ,  
ու զայն յղացող Միտքին համար միայն ճանչցաւ անոր  
գոյութիւնը . ու այսպէս երգեց Մտածումին յաղթանակը .  
Բանի Փառքին մէջ , բացարձակ հաւատքով .

Երէ գրկես միայն ցնորդները , երէ խմես  
Խարուսիկ գինիներու գինովուրիւնը , ի՞նչ փոյր ,  
Արեւը կը մեռնի , երեւակայական ամբոխը մեռած է ,  
Բայց աշխարհը գոյ է միայն բու հոգիիդ մէջ :

Ու երգելէ վերջ Ձեռնաւ Աղջիկըին միսթիք երգը ,  
ուրկէ «Համբոյրներուն գժոխքը արքայութիւն մը արժե-  
լուն» եղրակացութեան հասաւ , բարձրացաւ իր հերոսա-  
կան ու վշտոտ քնարը հնչեցնելով , դէպի Բանը՝ յալթե-  
լու համար տենչանքներէն ու բաղձանքներէն ծնած վիշ-  
լուն : Հաւաքեց յոյսերու հիասթափումները , հաճոյքնե-  
տին : Հաւաքեց յոյսերու հիասթափումները , հաճոյքնե-  
րու խղճահարութիւնները . և յիշատակներու տիրութիւն-  
ները , ու զարկաւ հանդիսաւոր նղովքի մը պէս երկնքի  
ճակտին . —

Աստուա՛ծ , Աստուա՛ծ , Աստուա՛ծ , անազորն'յն Տէր ,  
Ա՛լ ձանձրացանք անիծուած օրերէն ու արեւներէն ,  
Խնայէ ազատորիներուն՝ բու սոսկալի արքայութիւնդ ,  
Զգէ՛ որ մեռեները հանգիս բնանան եւ ալ չելլեն ...

Ապերեցուց դիցավեպերը , որոնք կրօններու պէս  
մարդկութեան մայր գաղափարները կ'աւանդեն իրենց  
ամէնէն զգայուն ու դիւրամներձ ձեւին մէջ : Նուիրական  
Անտառին մէջ ճանչցաւ աստուածներուն ման ու անէ-  
տեսառին մէջ ճանչցաւ աստուածներուն ման ու անէ-

ունայնութիւնը . . . ամնուրեք վիշտն ու ատելութիւնը տեսաւ, յուսահատութիւնը իջաւ մռալ ջղիկի թեւերուն պէս ու պոռաց գիշերին մէջ.

Դնա՛ աշխարհ, անդնդասո՛յզ, ո՞վ մարող, մռայլ արեւ, Անյագ անեւուրեան մէջ մեկէն անհետացի՛ր,  
Հայի կատաղուրեանս մէջ արծարի ձուլածոյի մը պէս :

Ոգեկոչեց Հողին պաշտամունքը մոռցուելուն աղէտքը, ու Բանի յաղթանակին երրորդ գլուխը՝ Մայեան այս յոռեսես եղրակացութեամբ է որ սկսաւ։ Յաւիտենական Պատրանքը փորձեց բանաստեղծը. չկրցաւ յաղթել Վիշապին, և տիրանալ կատարեալ իմաստութեան ու յիշատակովը յաղթական խարոյին, որ Պերսեպոլիսը մոխրացուց, ուզեց որ իր հոգին ալ անէանայ կարմիր կամքի մը բոցերուն մէջ, հին քաղաքին պէս, հեծկտալու համար նորէն կենդանիներուն պաղատանքը. Երբ որդերը պիտի կրծեն մեր ծունկերուն ուկորները, Շնորհի՛ մեր մարմինին, ուս մեացած անյիշաչարուրեամբ, Ոչ քէ պատի՛ր լոյսերը, այլ ստուերն ու լուուրիւնը, Քունը եւ մեր ու քո՛ւ ալ մոռացումդ...

Բայց անզուգական երդիչը, հակառակ բոլոր այս խոհուն արտմութիւններուն, պահեց միշտ, յոյսի մը պէս. երիտասարդ ու լուսաւոր Ելլադայի պաշտամունքը, ուր Գեղեցկութիւնը կը ճառագայթէր։

«Բանին Փառքը» բանաստեղծի իր անմահութեան զմայիլի գիրքը պիտի մնայ:

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆՑ

## ՍՐՏԻ ԲԱՐԵԿԱՄԸ

Հայ սրտի բարեկամն էր Փիեր Քիյեառ։ Իմ յուշատեարիս մէջ խանդուտ յուշերով քանդակուած է իր հոգին և իր գրչին հոյակապ նշանակութիւնը։ Վենետիկի ջրանցքէն միասին անցած ատենս, ինծի կը յայտնէր որ առանց ո՛ւ է նիւթական վարձատրութեան՝ կը հրատարակէր Դաշնակցութեան նախաձեռնած Փրօ Արմենիան, ուր հզօրապէ՛ս ինքը խմբագրապետը՝ կը խտացնէր հայ ցեղին տառապանքը. Փրօ Արմենիաի էջերուն մէջ, ուր հայ ազատագրութեան համար համախմբուած էին Անաթոլ մրանս, ժօրէս, Փրէսանաէ, Քլէմանսօ և ուրիշ հոյակապ դէմքեր։

Բաղդ կ'ունենայի իրեն հետ երկու օր անցընելու։ Կատարեալ տեղեկութիւն ունէր ան մեր գաւառացիներու տեղական կեանքին, պատմութեան, ծանօթ էր գրագէտ դասակարգի հոգեբանութեան։ Փարիզ մօտէն կը ճանչնար Պոլոյ «Հայրենիք»ի խմբագրական մարմնի ամէն մէկ անդամները, որոնց պառակտեալ ընկերական վէճերէն կը հետեւցնէր թէ Թրքահայը երկարաւե բառկամութիւն մը չի կընար մշակել։ Եւ ինծի կ'ըսէր թէ Ռուսահայերը աւելի հաստատուն գաղափարի տէր են և աւելի հաւատարիմ ընկերական կեանքի մէջ։ Անհունապէս պաշտում մը ունէր Խրիմեան Հայրիկի նկատմամբ։ Կը հիանար մեր նախնեաց գրչագիր գործերուն վրայ և

ցոյց կու տար հմտութիւն չին գրական պատմութեան։ Քիյեառ Ֆրանսացի Պառնասեաններու դասակարգէն էր, արդէն անմահացած իր քնար գրչով։ Ամէն անգամ որ կը ստանամ «Mercure de France» հանդէսը, ամէնէն առաջ կը կարդամ Քիյեառի գրական վերլուծումները։ Անոնց մէջ ինքը դրած է միշտ իր բանաստեղծ հագին սրտագրաւ շեշտը։ Անոնց մէջ ինքը զետեղած է իր գիտութեան և գրական հմտութեան չորհը։ Արդէն հոչակաւոր կը մնար իր «La Lyre héroïque et Dolente» գրական գեղեցկակերտ հեղինակութեամբ։

Իր գրողի հմայքոտ խառնուածքը՝ յայտնուած է 1884ին, աշխատակցելով Պրիւժմէլի «Basoche» թերթին։ Եփրայիմ Միքայէլի և Փոլ Ռուէի հետ է որ հիմնած է «La Pléïade» փոքրիկ հանդէսը, եօթը թիւ միայն լոյս ընծայելով։ այս թերթին մէջ է որ հրատարակած է իր «La Fille aux Mains Coupées» տաղաչափական երկու տեսարանով թատերախաղը որ Փարիզ, Փոլ Ֆօրի Թեատր Շ'Արի բեմին վրայ ներկայացուեցաւ 1891ի։ Ապրիլ ամսուան մէջ։ Աշխատակցած է նոյնպէս ուրիշ մէկ քանի թերթերու, ինչպէս «Wallonie»ի, Entretiens Politiques et Littérarîes»ի, «Floréal»ի, «La Révolte»ի, «Temps Nouveaux»ի, «Droits de l'Homme»ի, «Revue de Paris»ի, «Revue Blanche»ի, «Vers et Prose»ի, «Aurore»ի, «Européen»ի, «Peuple»ի, «Humanité»ի, եւայն։ Այդ հրատարակութեանց մէջ յայտնած է իր գրագէտի և հրապարակագրի ժողովրդական խառնուածքը։ Ամէնէն աւելի իր մեծ նշանաբանը կ'ըլլար՝ պաշտպանել ընկճուածին, լքուածին և անմեղին արդար դատը։ Եւ բնականաբար Տրէյֆիւսի դատին ալ՝ ամէնէն հզօր պաշտպաններէն մէկը ինքը եղաւ Անաթօլ Ֆրանսի, Օդթաւ Միքայիլ և Զօլայի հետ։

Պոլիս, իր յիշատակը անմահ կը մնայ, 1893ին

1896ին հասցուցած իր կարգ մը գրագէտ աշակերտներով՝ որոնց դասախոսած է հայ կաթոլիկ Լուսաւորչեան ուսումնարանը և Ղալաթիոյ Կեղրոնական վարժարանը։ Սահմանադրութեան հոչակումին, Քիյեառ Պոլիս գալով, իր գործը առանձին հանդէսներով գնահատուեցաւ և արժանացաւ երախտագիտական ցոյցերու։

Մեր գատին համար հրատարակած է «Արևելեան Հարցը» և «Հայաստանին համար» հատորներ։

Իր թարգմանութիւններն են «L'Antre des Nymphes» 1893ին, «Les Lettres de Claudius Alelinus Prénestin» 1895ին, «Le Livre de Jamblique sur les mystères» 1895ին, Սոփոկլի «Philoktêtès», 1896ին, «Les Mimes d'Hérondas», 1900ին։

Իսկ գրութիւններն են առանձին և ուրիշներուն աշխատակցութեամբ, «Etude phonétique et morphologique sur la langue de Théocrite dans les Syracuseines», 1888ին։ «La gloire du Verbe» 1885—1890ին, «L'Assassinat du Père Salvatore» 1897ին, La Lyre Héroïque et Dolente 1897ին, «Le Monument Henry» 1899ին, 1906ին սկսեալ պատրաստութեան վրայ էր «Loys» վերնագրով տաղաչափական մէկ տուամը Բեղմնաւոր Գրիչ և անխոնջ արտագրող։

Դասական գրականութեան և դասական լեզուի, հնախօսութեան պատմութեան և արուեստի՝ մշակուած Գլուխ մըն էր Քիյեառ։ 1897ին Արեւելք եկաւ, Փրանսական «L'Illustration» էն պաշտօն ունենալով նկարագրելու յոյնեթուրք պատերազմը։

Եօթը տարի առաջ էր որ զինքը առաջնորդեցի Վենետիկի գեղարուեստի Ակադեմիան, ուր առաջին անգամ կը տեսնէր հիանալիօրէն ցուցադրուած իտալացի դասական նկարիչներու գլուխ գործոցները։ Եւ Քիյեառ ցոյց կուտար արուեստի իր խոր հմտութիւնը՝ ճգրտօրին 47

ընելով պատմութիւնը ամէն մէկ վարպետներու նկարին։  
Ու երբ առաջարկեցի իրեն որ զինք առաջնորդնոմ նաև  
ժամանակակից նկարիչներու Միջազգային ցուցահանդէսը,  
անոյշ ժպիտով մը պատասխանեց։

— «Այս հրաշակերտ գործերը տեսնելէ վերջ, ինչու  
պղծնոք մեր աչքերը արդիական նկարիչներու խեղճ  
արտադրութիւններովը»։

Իրաւունք ունէր։

\*\*\*

Ցաւերու և լքումներու մատնուած հասարակու-  
թեանց համար այնքան անձնուէր հոգին պէտք է որ ըլ-  
լար խորապէս զզայուն եւ իրաւ իր «La Lyre Héroïque  
et Dolente»ը կը պարունակէ այնպիսի սքանչելի քնա-  
րական նմոյշներ, որոնք կարող են զարդը կազմել զրա-  
կան ամենածոխ հաւաքածոներուն։

Իր քնարին ձայնը կը համնի հելլէն աւերակներէն  
երգուած անոյշ զեփիւոփ թրթոռումով։ Իր երգերը ծո-  
վափին վրայ փոռուած ալիքներուն չափ յուղուած ու  
փրփրած ու մոնչող են եղած, թանձր և արինու ամ-  
պեր կը կախէ շահաբներու վրայ և արցունք կ'անձրեւէ  
ծառերուն վրայ։ Կը սաեղծէ հովուերգական նկարներ,  
միմնչաղին մէջ ցոյց կուտայ խուճապող տաւարը, որ  
մրտենիններու անտառին մէջ կ'անյայտանայ։

Սիրոյ յօշոտումը կը ցուցադրէ, և կը տեսնես մա-  
հուան շնչքին վրայ արեան բոսորակայլակում։ Անբու-  
ժելի վիրաւոր սրտերուն մէջ կը ցուցնէ շիթ շիթ իր  
կայլակումը մահուան թունաւորութեան։

Դաղափարներուն կը հազցնէ պառնասական ներշն-  
չումներու խայտաբղէտ պատմուձանը, անոր վրայ ցրցըք-  
նելով գոյներու ներդաշնակութիւնը և զգացմանց տպա-  
ւորիչ արտայայտութիւնը։

Տիսուրին մէջ հոյակապօրէն հոգեցունց է։ Մելա-

մաղձոտութիւնը կը պատկերէ նկարներով։ Կեանքը ար-  
հաւիրքներուն բարձրութեան վրայ կը տեսնէ խոշ-  
տանգուած, էակներու մութ անդունդին մէջ կը լսեցնէ  
ցոտերուն դժոխքին անիծապարտ կազկաննձումը։ Քնա-  
րկութեան մէջ մարմնացուցեր է ձաշակի նրբութիւնը  
և բարձրութիւնը։

Գրագէտ սէնազօլիք դասակարգին մէջ դատաւորի ու  
վարպետի հեղինակաւոր ձայնը հնչեցուցած է միշտ ՚՛իւ-  
եսու։ Բանաստեղծութեան մէջ ալ մնացեր է վեհանձն  
հոգի մը, խանդոս, յուզուող և յուզիչ։ Միշտ պայքա-  
րով՝ յեղաշրջական ազնիւ գաղափարներով, գիտութեան,  
կարելցութեան հոգին իր մէջ բիւրեղացած մնացեր է  
անզուգական արժանիքով մը։ Եւ այդ հոգիին ամէնէն  
լայն ու ազնիւ խորշին մէջ զետեղեց Հայսատանի հա-  
մակրանքը։

ԱՏՐՈՒՇԱՆ

## ՄԵԾ ՀՈԳԻ ՄԸ

Փիէռ Քիյեառ մնուաւ :

Տեսակ մը ցաւագին գոնունակութեամբ , կը նշմարեմ որ Հայերը գիտցան իր յիշասակը օրհնել ու փառաւորել , սուգի և երախտագիտութեան այնպիսի խորունկ ու սրասագին արտայայուութեամբ մը՝ որուն լրիւ արժանի էր թանկագին հանգուցեալը :

Ո՞վ էր այն ֆրանսացին . ինչ չողջողուն տիտղոսներ , ինչ աղաղակող պիտակներ ունէր անիկա , արժանանալու համար սպատմական հին անցեալով ցեղի մը ընդհանուր երախտագիտութեան : Ո՞չ հզօր վեհապետ մըն էր , ո՞չ քաղաքական աղղեցիկ անձնաւորութիւն մը , ո՞չ նշանաւոր փոլիթիքոս մը , ո՞չ ոսկեղէն չաստուած մը :

Բանասաեղծ մը , հմուտ մը և հրապարակագիր մըն էր :

Բայց ամէն բանէ առաջ՝ նախակարգային առաքինութեամբ մը օժտուած էր .— մեծ հոգի մըն էր : Իր բոլոր միւս տիտղոսները , այդ չքնաղ միջավայրին մէջ ինկած , անոր անստղիւտ պայծառութեամբը չնորհազօծուած ու գեղեցկացած էին : Ասո՛ր համար ահաւասիկ յաղթեց անիկա , առանց պէտք ունենալու՝ աշխարհիկ տիտղոսներու ծնծղայահարութիւններուն :

Իրը բանասաեղծ՝ կը պատկանի ֆրանսական Սէն-պղիսդ դպրոցին : Այս դպրոցը , ինչպէս յայսնի է , քսան քսաննեհինդ տարի առաջ երեւան եկաւ , իբր ընդվղումի

արտայայտութիւն ընդդէմ չափազանց ձեւապաշտութեան մը մէջ ցրտայած պառնասականութեան : Սէնպղիսդները կը կոռւէին , ինչպէս կը պատահի ամէն անդամ , երկրորդական սաղանդներու ձեռքը չափէն աւելի հինցած ու նորութիւնէ և հրապոյրէ հմայաթափ գեղեցկագիտութեան մը դէմ : Ասոր համար՝ իրենց նորութեան ու ինքնատպութեան տարօրինակ չարժուձեւերը : Բայց առանց իրական տաղանդի՝ բոլոր գեղեցկագիտութիւնները զիւրար միայն կ'արժին : Այդ է անշուշտ պատճառը որ , օրինակի համար ազատ ոտանաւորը (vers-libre) Վէռհարլնի մը ձեռքին մէջ միայն պահեց որ և է արժէք : Առաջին օրուան այն բոլոր բանաստեղծները , որոնք բան մը պիտի ըլլազին յետոյ , և որ յեղափոխական յիմարութեան թափէն բունուած՝ բռնի և արտեստակեալ նորութիւնները գործեր էին , իրենց տաղանդին ամէնէն հասուն արտայայտութիւնը բերելու պահուն վերադարձան դասական արուեստին մաքուր ու յաւիտենական եղանակներուն : Այսպէս ըրին Մոռէսու , Տը Ռէնեիէ , Սամէն , Կէռէն և զեռ ուրիշներ , ամէնքն ալ անժխտելի բանաստեղծներ : Իսկ անոնք որ յամառեցան տարամերժուն ու մողեւանդօրին Սէնպղիսդ մնալ , ինչպէս Մալումէ , Կիլ , դարձան անթափանցելի , հանելուկային զրոյներ միայն , հակառակ անժխտելի գիտութեամբ արուեստի մը , և կամ մնացին երկրորդական դէմքեր , ինչ որ իրենց բանական ճակատագիրն էր , ըլլային Սէնպղիսդ թէ Ֆիւթիւրիստ :

Քիյեառ , այդ խումբին մէջ , կարծեմ թէ Փիէռ Լուիսին հետ , միակն էր , որ կրցեր էր նախատեսկ ապագան : Առաջին օրէն՝ արտայայտուած է նրբախոն , մեծվայելչօրէն արտմադին և պայծառ ու գասականօրէն կատարեալ այն բանաստեղծը՝ զոր ճանչցանք ու սիրեցինք :

Իսկ իրը հրապարակագիր ու իբր քաղաքական դր-

ծիչ, իր դերը աւելի քան յայտնի է այսօր բովանդակ  
հայութեան :

Այս վերջին պարագային մէջ, կէտ մը կայ բացա-  
ռապէս ուշադրութեան արժանի :

Քիչեառ՝ արհեստով մարդասէր մը (un philanthrope professionnel) չէր : Հայերը սիրեց՝ ինչպէս պիտի սի-  
րէր համակրութեան իսկապէս արժանի ու է տառապած  
ժողովուրդ, զոր մօտին ճանչցած ըլլար : Չէ թէ որով-  
հետեւ ինքը կը պատկանէր զրօշակի մը՝ որուն ծալքե-  
րուն վրայ նշանակուած ըլլար այդ բառը, — Մարդասիրու-  
թիւն : Վարդապետական կամ եպիսկոպոսական ցուրտ  
կամ ցուցամոլ մարդասէրը չէր ինք : Չէր նոյն իսկ բա-  
նապաշտական մարդասէրը, որ ակամայ գլուխ պիտի  
ծոէր որ և է impératif catégoriqueի անտանելի ծանրու-  
թեան ներքեւ : Մարդասէր էր այնպէս՝ ինչպէս բանաս-  
տեղծ էր : Այսինքն՝ հոգիով ու սրտով : Այդպէս էր՝  
որովհետեւ չէր կրնար ուրիշ կերպ ընել : Բանաստեղծու-  
թիւնը, ինչպէս մարդասիրութիւնը, գեղեցկութեան ծա-  
րաւը, ինչպէս ընկերական կարգին մէջ ծալքագոյն ու  
բացարձակ արտայայտութեան մը կիրքը՝ իր մօտ՝ ամե-  
նարարձր ու ամենաազնիւ տեսակի վիրարերող անշահա-  
խնդիր Տէլիքանքիւնի մը արդիւնքն էին : Խորին և  
ինքնաբուխ անկնդութիւնն ունէր այդ ձգտումներուն,  
իրու հոգիի գինովութիւններ, իրու հոգիի համոյքներ,  
վայելեց զանոնք, բանաստեղծութիւնն ու մարդասիրու-  
թիւնը, իրարու հետ իր անձնն մէջ վահմօրէն ներդաշ-  
նակաւորելով՝ այս իրարմէ բոլորովին տարբեր ծագումով  
հոգեբանական երեւոյթները :

Իրը անիշխանական ու իրը անկախ անհատապաշտ,  
երազող մըն էր անշուշտ : Բայց ինձի կը թուի թէ հա-  
ւատք մը չէր իր երազը :

Իր բանաստեղծութիւններուն մէջ հատ մը կայ,

Սառուդ : — Աստուածաւնչական աւանդութիւնը կ'ըսէ  
թէ եղաւ ատեն մը ուր Եհովայի համակրութիւնը հե-  
ռացաւ . Հրէաստանի թագաւորէն, ու չար ոգի մը մերթ  
ընդ մերթ կուզար նեղի պինքը : Ասոր համար՝ գացին  
գտան Տէլիքէն մյի Յեսոսին որդին, քնարահար Դաւիթը,  
խանարած երիտասարդ աշուղը, որ Հրէաստանի պայ-  
ծառ գիշերներուն մէջ, իր իինօրին վճիռ թրթումները  
կը զրկէր երկինքի ոսկեղէն աշքերուն, մինչ իր գառ-  
նութիւնները կ'արածէին հանդարատորէն՝ լուսնկային ար-  
ծաթալօծ նշոյներուն տակ : «Եւ լինէր տրժամ հասանէր  
այսին չար ի վերաց Սաւուզայ, առնայր Դաւիթ զքնարս,  
և նուագէր ձեռամբ իւրով, և հանգուցանէր զՍաւուզ,  
և զիւրանայր նմա, և մեկնէր ի նմանէ այսն չար» :

Մարդկարթիւնը յաւիտենական Սաւուզն է, չար  
ողիներէ յաւիտենասկէն հալածական : Ո՞ւր է այն բարի  
քնարահարը՝ որ պիտի գար զինքը աղատել իր անդար-  
մանէի չարչարանքներէն :

Homme, Schaoul des temps infinis, saigne et pleure :  
Les carnassiers hideux suivent sur ton chemin  
La trace de tes pas, hier, aujourd'hui, demain,  
Toujours : le changement de la forme et de l'heure  
N'écartera jamais le horde des ennuis,  
Et tu traîneras dans l'horreur sans limite,  
Sans ouir le Kinnor et le Bethléemite  
Qui te ferait des jours pareils aux belles nuits.

Բայց հարկ էր միթէ անպատճառ հաւասար, գգա-  
լու և սիրելու համար : Հոգիներ կան, և ասիկա միտի-  
քականութեան նոր մէկ երանգն է անշուշտ, որ երազը  
կը սիրեն տակաւին, տեսակ մը սկեպափիկ ու հեղնաժափա-  
յափշտակութեամբ, տեսակ մը նրբին հեշտախնդրու-  
թեամբ, զիստակորէն անհաւատ, այլ անգիտակյօրէն  
երազամոլ : Եւ ասոնք անվերապահօրէն աղնիւ ու մա-  
քուր հոգիներ են :

Անոնցմէ էր Փիէռ Քիյեառ:

Քիյեառին հետ բնաւ չձանօթացայ անձնասղէս : Բայց  
կն բարեկամ մըն էր ան ինծի , ըլլալով հին ընթերցող  
«Mercure de Franceին»: Այսուհետեւ ի զուր պիտի փնտում  
իր անունը , որուն պարբերաբար սովոր էր հանդիպիլ  
իրը բանասաեզական հրատարակութիւններու մշտական  
քննադատը : Ի գուր պիտի վնտում իր ստորագրու-  
թիւնը՝ մեռած ընկերի մը յիշատակին նուիրուած յօդ-  
ուածի մը ներքեւ , երբ , ամէն անգամ ինքն էր որ կը  
փութար , բարեկամի ձեռքով , թեթև տասպանաքար մը  
զետեղելու՝ ժամէն առաջ մեկնողներուն հողակոյախն  
վրայ : Mercureի յառաջիկայ թիւնին մէջ՝ ուրիշ մը իրեն  
համար պիտի կատարէ այդ գառն պարտականութիւնը ,  
ու , այլեւս ոչի՞նչ , այլեւս ոչի՞նչ . . . :

Իսկ մենք , Հայերս , սրասրեկ երախտագիտութեամբ  
պիտի յիշենք միշտ այս ազնիւ Ֆրանսացին : Ի՞նչպէս  
կրցաւ , առանց այդ բանին ստիպուած ըլլալու , այլ  
ինքնարերաբար , մեր ցեղին տառապանքները իւրացնել  
ու տարիներով չարչարուիլ անսնցմով : Ու պիտի կրկ-  
նենք մինչեւ գերջը իր ետեւէն սրտագին՝ ինչ որ ի՞նքը  
գրած էր իր սկրելի էֆրայիմ Միքայէլի տապանաքարին  
վրայ .

En vain les mornes dieus, formidables et doux ,  
Ont détaché ta main de nos mains fraternelles :  
Le sel acré des pleurs brûle encore nos prunelles ,  
Quand ta voix , triomphant des heurs, chante en nous...

ԱՐՏԱՇԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

## ՊԻԷՐ ՔԻՅԵԱՐ

Պէռ Լաշէզի գերեզմանատանը , իրենից ոչ հեռու ,  
պառկած ին ընդհանուր , լայնատարած դամբարանի տակ  
15,000 Կումունարներ , — նրանք , որոնք 1871-ի սար-  
ավելի օրիերում , Մօն-Մարտրի բարձունքների վրայ  
պարզեցին «տիեզերական կարմիր հանրապետութեան»  
Դրօշը և արիւնանեղ կուիներից յնտոյ խմբովին կոտոր-  
ւեցին բուրժուական կառավագութեան հրամանով :

Մեր րմբոստ բարեկամի հոգին գնաց միանալու—  
նոյն արիւնոտ , նւիրական հոգի տակ— այդ միւս ըմ-  
բոստների թանկագին նշխարներին , որոնց հետ նա կապ-  
ւած էր իր ապատամբ խառնւածքով . իր մոքի ու սր-  
տի ամենանուրը թեկերով :

Անատօլ Ֆրանս և Գրանսիական գրականութեան առ-  
գագաթներ , Պրէսսանսէ և ֆրանսիական հրապարա-  
կագրութեան այլ բազմաթիւ ներկայացուցիչներ գնացել  
էին իրենց յարգանքը մատուցանելու այդ վաղաժամ դա-  
գաղին . Պարզեցին գրագէտների երխասասրդ պէէադը  
ողբում է համակրելի fin-letttré-ի անագորոյն վախճանը ,  
բայց թւում է թէ , այդ մահուան և արդ թաղման սիմ-  
վոլիկ արտայացութիւնը , նրա վսեմ խորհուրդը ուրիշ  
տեղ էր . . . այն փոքրաթիւ հայկական պատգամաւորու-  
թեան մէջ , որ խոր սգով համակւած , հետեւումէր դիա-  
կառքին , որ սրտառուչ , եղբայրական գուրգուրանքով  
տանում էր դագաղը ուսերի վրայ . . .

Պրէսսանոէ, Անստոլ Ֆրանս նոյնպէս ըմբռուս, յեղաւ-  
փոխական Ֆրանսոխազի զաւտիներ են, բայց ուրիշ շրջանի  
մարդիկ... Քիչեառի սրախն շատ աւելի մօտ էին՝ հին,  
կրասիկ յեղափոխութեան դէմքերն ու մեթօնները, կոմ-  
մունարների վրիժառու և ճարակող ոռումբերը, զարի-  
բալշեանների կարմրավառ շապիկները, Բլանկիների  
ցանկոտ և դաւագիր հոգենները, որ յզացել են անցիալի  
մէջ այնքան անեղ և խիզափ ծրագիրներ, որ ծրագրել  
են հաղեցնել վառօդի և ուժանակի հակացական հոսքի  
մէջ՝ աշխարհը սարկացնող, ժողովուրդների կեանքն ու  
առաջդիմութիւնը խեղզող, այլանդակող բոլոր սեւ  
անջրագեանները, երիտացին և երկրաւոր բոնութիւններն  
ու անիրաւութիւնները...

Քիչեառի սրախն շատ աւելի մօտ էին այն յանդուզն  
հոգինները և նա նրանց չէր գանում այլ ևս իր պահծա-  
մի հայրէնիքում, նա նրանց վիճարում էր օտար երկնքի  
տակ, գանուս էր նմանները հեռաւոր Հայաստանում ու  
Մակեդոնիայում, ոգեսրում էր Սերոբների ու Սարա-  
ֆօվների դէմքերավ ու գործերով... ձնչւած, լացող, հո-  
գեվարող Հայաստանը ցնցում էր նրա բարի, զգայուն  
սիրու, բայց աւելի ևս ցնցում էին Սնդրանիկների յու-  
սահատ և գահավէժ թոշէքները, — հայկական մարտիրո-  
սագրութիւնից շատ աւելի հրապուրիչ էր նրա համար՝  
հայկական դիւցազիներութիւնը...

Եւ երբ մի օր՝ 12 տարի սրանից առաջ՝ Պրօ Սրմէնիստի  
հիմնադրութեան օրերում, ֆրանսիացի բարեկամի հետ,  
Ժինէի մի մենաւոր հիւրանոցի սէջ, հաւաքւել էին  
մտերմական ճաշի շուրջը «Դրօշակ»ի խմբադրութեան  
մադամները և հայ ուսանողութիւնը, — Քրիստափոր իր  
հակիրճ բաժակաճառի մէջ ուղղում էր համակրելի հիւ-  
րին հեակեսկ նշանակալի խօսքերը.

— «Մենք չմնք, որ զտանք ձեզ, — այլ դուք էք,  
որ մեղ դտաք»...

Զարմանալի ճիշտ ըմբռնում Պիէր Քիչեառի յեղաւ-  
փոխական էութեան :

Քիչեառ պատասխանեց Քրիստափորին մի զգացւած  
ճառուկ։ Երկու յեղափոխականները այնուհետեւ կապե-  
ցին մտերմական կապերով։ Ըմբռու և արւեստագէտ  
Քրանսիացի հայասէրին կախարգեց հայ չարժման վե-  
տերանի լոիկ, համեստ անձնաւորութիւնը, նրա ազգու,  
առաքելական պատկերը, որի մէջ նշմարում էր թերեւս  
վշտատանջ և ապստամբ ժողովրդի ոգու ցոլքը։ Եւ  
ամէն անգամ մեզ հանդիպելով, նախ Քրիստափորի մա-  
սին կը հարցնէր, նրա առողջութեան ու գործերին կը  
տեղեկանար և շատ անգամ կը յարէր.

— Vous savez, j'ai une culte pour Christophor !

Եւ նա ողբաց մեր լնկերոջ մահը, ինչպէս կ'ողբար  
ամենամտերիմ հարազատը։ «Դա մի աղէտ էր, ասում  
էր նա, ես իմ կեանքում ոչ ոքի այն աստիճան չէի սի-  
րել ու յարգել և ոչ մի մահ այս աստիճան չը ցաւեցրել  
իմ սիրաը . . .»

Ինքն էլ գնաց այժմ՝ Քրիստափորին միանալու,  
ճիշտ նոյն տարիքում, յոյսերով ու ծրագիրներով բնու-  
նաւորւած . . .

Ինչպէս գնահատել թանկագին հանգուցեալին, ին-  
չոց սկսել . . . Այնքան բազմազան են Հայոց դատին մա-  
տուցած նրա ծուռայութիւնները։ Նրանք սկսւում են հայ  
զուլումի նախօրեակին և շարունակում են մինչև դա-  
շաղ։ Նրանք որոշ, սխտեմատիկ բնոյթ են առնում  
գաղ։ Նրանք օրերից ի վեր, երբ հաստատեց կանոնա-  
ւոր յարաբերութիւն Գանձակցութեան ու Քիչեառի  
միջեւ։

«Պրօ Սրմէնիստի միսսիօնը և գործունէութիւնը  
յայսնի են բոլորին։ Նախաձեռնողը Քրիստափորն էր,

հոգին —ինքը խմբագրասպետ Քիյեառը, աջ բազուկը — այն հոյակապ ծերունին, որ այսօր որդեկորոյս հօր պէս մնացել է որբացած, անդարմանելի սդի մէջ — Պրէսսանսէն :

Հայր և որդու ամենաքնքոյշ յարաբերութիւններ էին հաստատել երկուսի միջև. մինը միւտով հպարտ էր. մինը զրում էր յօդւածներ, խտացնում էր Հայաստանից եկած լուրերն ու տեղեկութիւնները, միւտը — Պրէսսանսէն — և՝ գրում էր և՝ միաժամանակ հնչեցնում «Պրօ Սրմէնիա»ի դատը ֆրանսիական պարլամէնտում, ուր նա ունէր միշտ ուշադիր և պատկառոս լսարան, որին նա միշտ հմայում էր իր ահագին էրուդիսիօնով, իր նըշապաշտ ու կարկաչուն բարբառով և իր անկեղծ ու մաքուր ասպետական բարկութիւններով :

Ինչքա՞ն տիսուր ու ճնշող էին «Պրօ Սրմէնիա»ի երկունքի օրերը: Թնրթի առաջին համարները անցնում էին ընդհանուր անուշադրութեան մէջ. Պարիզն ապրում էր իր ընտանի և փոխորկոս վայրկեաններից մինը: Տրանսվարեան պարտած հանրապետութեան վեհափառ նախագահը, Կրիւզիր, կատարում էր հանդիսաւոր մուտքը նրանսիայի մայրաքաղաքը և Պարիզիք դիմաւորում էին յոյցերով, ովսաննաներով: Յոյցերը երկար տեսեցին, ամբողջ շաբաթներ հանրային ուշադրութիւնը կեղրոնացած էր կրիւզէրի վրայ:

Անցաւ, ասկայն, ժխորը և կտակաց-կամաց հայ-ֆրանսիական նոր օրգանը նիւթ դարձաւ լրագրային յօդւածների ու մեկնութիւնների: Պէտք էր նախ խօսեցնել Մեծ Մամուլը — և նրան խօսեցրեց Պրէսսանսէ: Նրա ձեռքումն էր Տեմպր-ի առաջին սիւնեակը, ուր արձարծում էին միջազգային քաղաքականութեան կընձիռները և ուր թառել էր մեր բարեկամը երկար տարիներից ի վեր իր գիտուն, զմայլելի գրքի շնորհիւ,

հասցրել էր պարիզեան մեծ օրգանը անսովոր բարձրութեան, դարձրել էր այն՝ համաշխարհային կարծիքի խոշորագոյն ազդակներից մինը:

Եւ մի օր այդ ազդեցիկ և իրաւարար-օրգանի առաջին սիւնեակը ներեւց «Պրօ Սրմէնիա»ին ու նրա դատին: Այսուհետեւ խորսակւած էր անտարբերութեան սառուցը. մամուլի միւտ օրգաններն ևս, արտասահմանն ևս սկսեցին հետաքրքրուել փոքրիկ, հսմնատ երկշաբաթաթերթով, որի ճակաար գափդարւած էր ֆրանսիական մոքի և հոգու ազնւականութեան ամենախոշոր անուններով — Անատոլ Ֆրանս, Կլէմանսօ, Պրէսսանսէ և Ժօրէս:

«Պրօչակ»ի խմբագրութիւնը մասակարարում էր նոր թերթին Երլիկից ատացւած նիւթերը և Դաշնակցութեան Սրեմտեան Բիւրօն, յանձին իր պարիզեան ներթեան ամսագրեանի վարում էր թերթի անտեսական մասը, կայցացոցիչների՝ վարում էր թերթի անտեսական մասը, հոգում էր և նրա տարածումը հայ եւ օտար աշխարհներում:

Առաջին համարի մէջ թերթն արդէն զբսեւորեց իր քաղաքական գոյնը, իրբե ոչ միայն տեղեկատու մի օրքաղական կոյնը, իրբե կուլի օրգան, կուլ՝ ուղղւած հայ գան, այլ իրբե կուլի օրգան, կուլ՝ ուղղւած հայ գողովրդին արքագետով մեծ բռնապետութեանց դէմ: Քիյեառ և կլէմանսօ — վերջինս իր «Արիւնու ձեռք» Քիյեառ և կլէմանսօ — վերջինս իր հուժկու յօդւածի մէջ — իսարանում էին վերնագրով իր հուժկու յօդւածի մէջ — իսարանում էին համիդեան բարբարոսութիւնները, այն ինչ՝ Պրէսսանսէն համիդեան բարբարոսութիւնները, ամէն ինչ՝ Պրէսսանսէն հայահալած քաղաքականութիւնը էր լօրսանօվեան հայահալած քաղաքականութիւնը . . .

Հրապարակագրութեամբ չսահմանափակւեց Քիյեառի ագիտացիական գործունէութիւնը ի նպաստ հայ ժողովրդի: Խօսքը միացաւ գրչին, խօսքը, նոյնքան սիրելի, և համոզիչ որքան գրիչը, — Քանի՛ կոնֆերանսներ, համազիչ միախնդներ, ճաշկերոյթի ճառեր . . . Հրապարակային միախնդներ, ճաշկերոյթի ճառեր . . . Պրէսս Քիյեառը — Երիւսէլում, Լոնդոնում, Ժընէվում, Միջուկում, Հուստում, Բուտակէստում, ամէն տեղ, ուր հոդանում, Հուստում, Բուտակէստում, ամէն տեղ, ուր հոդ

Նա ձեզ սիրով և իրազեկ մարդու ձեռնհասութեամբ կը պատմէ, Հիւրշմանների, Միւլլերների ու Մէլիչների տեսութիւնները հայկական լեզւագիտութեան վերաբերմամբ, նա ձեզ անգիր կը թւէր և Տարօնի, Սամանյան հաշիւ գիւղերի անուշները, աշխարհագրական դիրքը, նրանց ապրած աղէանները եւալուն:

Ահա թէ որպիսի ընկեր կորցրինք : Մեղ հետ էր նա հայկական տագնաապի աղէտարեր եկելչներում . մեղ հետ էր , երբ Սասունը պարզել էր ապստամբութեան դրօշը՝ վերստին յիշեցնելու պապանձւած եւրոպային արիւնաների հայրենիքի սրբազն գանգաանները . մեղ հետ էր , երբ ապստամբ բանակը , երկու ամսւայ յուսահոտ դիմադրութիւնից յետոյ սկսել էր — Գէորգի , Վահանի , Հրայրի . Սանդրանիկի առաջնորդութեամբ — իր տիսուր նահանջը դէպի Սասունք ու Տալորիկ . մեղ հետ էր , շարունակ թափում էր Պարիզից նամակների տարափ , հարցնում էր տեղեկութիւններ ուազմիկների մասին , հարցնում էր խորհուրդներ եւրոպական կարծիքը յուշելու վերաբերմասիք — մինչ Պրէսսանոէն , իր հոգեւոր գալախիարական հայրիկը , փոթորկում էր Գրանսիական պարլամէնաը իր վճիռ և յուզիչ պիրծամիսութեամբ , իր վիճանձն ընդգումներով ընդդէմ Կարմիր Գաղանի , իր խանդավառ ներբողներով , ուղղւած հայ ուազմիկներն — մեղ հետ էր Պիէր Քիյեառ խանդավալառութեան այն օրիում , երբ նորէն յուսաղրւած Սասունի ապրատամբութեամբ ու եւրոպական դաշիճների սթափւած ուշադրութեամբ՝ կազմում էին Քրիստափորի հետ նոր ու լրիւ միշատակագլուրը , — աւելի յստակ և ընդարձակ քան Մայիսեան մէմօրանդումը — որ յետոյ ինքը Քիյեառ ներկայացրեց Դելկասէին՝ յանուն Գաշնակցութեան . մեղ հետ էր նա , վերջապէս Վասպուրականի , Խաչանի

ամինավելքին աղէտի ժամանակ, օսմանեան Յեղափոխութեան նախօրեակին, որը նորէն բարձրացել էր խթդդժութեան հողմը և տանջանքի, յուսահատութեան, բառաջը. մեզ հետ էր նա 1908-ի յուլիսին: Վիկտոր Բերարի և Դաշնակցութեան պատրիարքի հետ, ներկայանում էր արտաքին գործերի մինիստր Պիշօնին, պատմում էր հայ ժողովրդի անվախճան տագնապը և լուծծումն էր պահանջում...

Դաշնակցութեան հետ էր ամէն տեղ և ամէն պարագայում — անդամ Ընդհանուր Ժողովի նիստերի մէջ, Բուլգարիայում — և մենք երբէք չենք մոռանայ սիրւած Ընկերոջ, բարեկամին, երբէք չենք ջնջի մեր սրտերից ու մտքերից՝ այս վերջին փոթորկալի տասնամեւակի մի շարք յուզիչ դրւագները, չենք մոռանայ — և այսօր երախտագիտութեան ու սիրոյ անխառն զգացումով, խոնարհուում ենք սյդ թարմ դամբարանի և այդ անրիծ, ոգեսորիչ իշատակի առջեւ:

Մ. ՎԱՐԱՆԻՔԱՆ

## ԱՅՆ ՄԷԿԸ...

Անակնկալ դոյժը քրանսացի բանաստեղծին մահուան, հայկական սուգ մը դարձաւ և մեր ախրադին ուշադրութիւնը հրաւիրեց այն մարդասէր Եւրոպացին վրայ, որ ուզած էր մեր ցաւով և մեր ազգացին հոգեռովը զբաղիլ, Անիկա իր մարդասիրական լայն և յուղումի լնդունակ հոգին մէջ որդեգրած էր հայկական վիշտը, և այնպիսի օրերու մէջ, երբ յուստհատական և գերագոյն կոփերի օրերը եղան մեր ազգացին պատմութեան, ցաւի և փառքի օրերու մէջ անոր արիական, քաղցր և ասպետական անձը զգացինք մեր լմբուսներու շարքին մէջ, պատճէշն վրայ:

Մենք զինքը սիրեցինք և խորապէս զգացուեցանք,  
ու զարմանալով հիացանք իր մասնակցութեանը համար  
հայկական դատին յաջողութեան, որովհետեւ անիկա կը  
լրացնէր մեր վաղեմի, մեր փայփայած խոչաներէն մէկը  
—եւրոպական մարդասիրութեան և քաղաքակրթութեան  
պաշտպանութիւնը՝ մեր ոտքի կոխան եղած աղջու-  
թեանը համար :

Ու այդ մշկը՝ մոռցնել տուաւ մեղի շատ մը դառն յուսախարսոթիւններ:

Աղջ էր այդ Թրանսացին, որումն պայծառ ճակատը  
և գեղեցիկ ու քաղցր աչքերը դարձեր էին դէպի հայ-  
64

կական արհաւելքը . իր եւրոպական հոգին ինչպէս կըրցեր էր ընդգրկել այն դաժան ճակատագիրը որ հեռաւոր , մոռցուած և իշխանին մէջ խեղդուած ցեղի մը ճակատագիրն էր , իր վճիռ բանականութիւնը ինչ յաւագին երկունքով ստեղծեր էր հայկական դատին պաշտպանութեանը նուիրուած այն երկարաւեւ աշխատութիւնները , որոնք բնա՛ւ օտարի ձեռքէ կած էջերու կնիքը չեն կրեր . անիկա չեր ուզած մնալ հովանաւունիքի , պաշտպանի ցուրտ և վերապահ գերին մէջ , այլ էջեր էր մեղի հետ արիւնոտ կրկէսը ու ամէնէն տագնապալի օրերուն անիկա մեր քովիկը տեսեր էինք : Մոռցեր էինք որ անիկա օտար էր , թէ իր երջանիկ և փարթամ հայրենիքին մէջ կրնար իր այնքան գերեցկօրէն սկսած բանաստեղծական ասպարէզը շարունակել , մոռցեր էինք որ իր համբաւեալ գրագէտի անունը և ժամանակը մեղի իսպաս դրուած էին և մոռցեր էինք նոյն իսկ թէ այն սիրալ որ սահմանուած էր գերագոյն զգայնութիւններու , երանգներու և երաժշտութեան յուզումովը վըրդունելու , զրաւուած էր բոլորավին գմբախտ ցեղի մը դովուելու , զրաւուած էր բոլորավին գմբախտ ցեղի մը ըմբռատացնող և յօշոտիչ տառապանքովը : Ու այս մէկը մոռցնել տուաւ մեղի բոլոր անոնք որոնք կը տատամսէին մեր մարտիրոսութեան վերջ մը դնելու , որովհետեւ քաւական շահեր չէին յուսար իրենց զոհողութիւնները փոխարինող :

Ս.յն միջոցին որ աչքիս առջև կը բերեմ իր առաք-  
եալի գեղեցիկ և երազուն դէմքը. երբ կը յիշեմ իր վը-  
ճիտ և լուսաւոր նայուածքին բարութիւնը, ինծի կը  
թուի որ անոնք չեն կրնար ենթարկուիլ մահուան դաժան  
օրէնքներուն. և այդ անկարելիութեան մէջ խորապէս  
կը զգամ որ ճշմարտութիւն մը կայ անշուշտ. անոր խան-  
դավառութիւնը բոլոր վշտացեալներուն և տառապողնե-  
տավառութիւնը համար, անոր անխոնջ անձնուիրութիւնը բոլոր  
բուն համար, անոր անխոնջ անձնուիրութիւնը բոլոր

մարդասիրական դատերուն, բոլոր ճնշուածներուն, ա-  
նիրաւեալներուն համար պիտի յաւերժացնէ իր նույիրա-  
կան յիշատակը ու մասնաւորապէս մեզի. համար անիկա-  
է, և պիտի մնայ այն սրբազնն աւանդութիւններէն  
մէկը, որուն մէջ սերունդներու յաջորդութիւններ խը-  
րախոյս և քաջութիւն պիտի գտննեն անշուշտ:

Փիէո. Քիյեառ իր ասպարէզը սկսած է դժուարահաճ և նրբաճաշակ բանաստեղծական լրջանի մը՝ ուր բալոր միջակ և թեւատ բանաստեղծները խիստ և անաշխատ դատաստանի մը հնդարկուելով, դուրս կը ձգուելին ճշմարիխ նախասահմանուածներու հողին. Քիյեառ գեղեցիկ տեղ մը զբաւած է այդ հողին մէջ և իր անունը անցած է Ֆրանսայի բանաստեղծական պատմութեան էջերուն մէջ: Քիչ ետքը՝ տարուած մարդասիրական մեծ արբեցութենէ մը, իր անունը խառնած է անիշխանականներու շարքին. Ընկիրային մեծ անիրաւութիւններու և ոճիրներու դէմ որոնք պայմանագրական բարքերով նուիրագործուած, բռնութեան տարբեր տեսակէ ցանցի մը մէջ կը ճնշէին ինկածները և տկարները, խիզախ, անհաջիւ և բոլորանուեր պայքարը ձայն տուած էր. իշխարու ետեւէ ինկան Վայյան, Ռավշաջօլ, Էմիլ Հանրի, ևն. իրենց հուժկու բազուկներով ուրուագծելով գերագոյն վրէժի գեղեցիկ մէտքը: Որոտացող պօմպաներու աղմուկին մէջ շուարած և խելակորոյս բռնաւորները, մեծ անիրաւուները և անհամար անարդարները պահ մը կեցան. մարդկային թշուառութիւնը իր հեծեանքը դադրեցնելով, մտիկ բրաւ անոնդ ձանին:

Աղաս, եղբայրական և հաւասարապաշտ Թրանսայիլ  
մէջ անգամ մըն ալ կառավնատները ցցուեցան ու մար-  
տիկները քաջաբար եղան անոր սանդուղներէն վեր...  
Բայց որպէսպի անիրաւողները, ճշգրները ու տէրերը

հանգստանան և իրենց վրդովումը փարատի, որպէսզի  
անպատճի և առանց սարսափի շարունակեն իրենց վամ-  
բիոփ կեանքը, հայածանքը սկսաւ մեթոտաւոր և կաղ-  
մակերպուած յամառութեամբ. բոլոր անոնք որ արտա-  
սանած կամ գրած էին «La bonne parole»ը, արդիկա-  
փակուեցան և տեղի ունեցաւ այն եղական դատավա-  
րութիւնը Փարիզի մէջ, ուր ամբաստանեալնիւր մէյ մէկ  
դատավագնիւր կը ներկայանային և որոնց պերճախօսու-  
թիւնը և եռամդը և արտայայտած զգացումներու մե-  
ծութիւնը սահմանուած էին նոր տեսակէտներ և նոր էու-  
ծութիւնը սահմանուած էին նոր տեսակէտներ և նոր էու-  
ծութիւններ բանագու նոյն խոկ կոյրերու աչքերուն: Այդ  
դատավարութեան տակ բնկած էր Քիցեա և աւարուու-  
դատավարութեան տակ բնկած էր Պոլիս: Արդի  
մէն ետքը գրեթէ խուսափելով իր հայրենիքին: Արդի  
կոիւի ընկերներու հետ եկած էր Պոլիս՝ 1893ին:

Պոլսոյ մէջ հաղորդակցութեան սահմանագործութեան հապահովիչն հետ է: Մեծ ջարդերը աեզրի կ'ոռնենացին հետզին-առէ, հայ արիւնը կը թափէր մեծ ալիքներով և ապշած Երրապայի աչքին, արևան կարմիր մշուշի մը մէջ կը յայտնուէր այս հնամենի և մոռցուած ալզին գոյութիւնը,

Մեր վշտաղին, մեր չարչարուած աղդալիս լլու  
զգածութիւնը երախտապարտ է բոլոր անոնց՝ որոնք նոյն  
հակ անզօր ցաւակիցներ եղան անոր. բայց երբ այդ հա-  
զուադէպ այլ սրբազն անոնցներէն մէկը կը ներկայա-  
նայ սուգի սև գիծերու մէջ, անոնցմէ մէկը մանաւանդ  
որ գործօն կերպով մասնակցեցաւ մեր պայքարին ու իր  
բոլոր բանաստեղծական աւիւնով տառապեցաւ մեզի հետ,  
կը մտածեմ ահա՛, թէ ի՞նչ ունինք իրեն տալու փոխա-  
ըն:

Մինչեւ հասնին այն օրերը երբ կորուսք է  
մարակերտ արձանը կանգնել հայրենի հողին վրայ, զայն  
մեր սերունդներուն աւանդելու համար, մինչեւ այդ օրերը  
մենք ինչ ունինք իրեն առաջ:

Մեր Պանթէօնը լեցուն է չարչարուած զոհերով և  
յուսահատ և անհաւասար կռիւի մէջ ինկած մարտիկներով, ու մենք հարուստ ենք միայն տառապղներու և  
պայքարողներու շքեղ և պայծառ լուսապակներով։

Ու այս պահուս, երբ ամբողջ հայութիւնը իր ըդ-  
գացած սուգով կ'առաջնորդէ զայն մեր յիշատակներուն  
այդ տիսուր Պանթէօնը, կը զգանք շատ լաւ որ ֆրան-  
սացի բանաստեղծ և մեծ մարդասէր Փիէռ Քիյեառի ա-  
նունը մեր ամէնէն հարազատ անձնուէրներու անուննե-  
րուն մէջ պիտի ճաճանչէ վճիռ և գեղեցիկ լոյսով մը։

ԶԱԳԷԼ ԵՍԱՑԵԱՆ



## ԳԱՂԱՓԱՐԻ ԱՍՊԵՏԸ

Քիյեար մարդկութեան Սրտին մէկ բարախիւնն է։ Ան  
քաղաքակրթութեան այն յառաջամարտիկներէն եղաւ։  
որոնք իրենց ամբողջ կեանքը կու տան՝ ու է ազգ կամ  
անհատ, որ ազդակ ու կրնայ ըլլալ մարդկարին յառաջ-  
դիմութեան, կործանիչ տարրերէն աղատագրելու հա-  
մար։

Իր կեանքը, բնական իրաւակարգով մը անշուշտ,  
կապուեցաւ մեր տառապանքին ու մեր պայքարին հետ,  
այսօր իր մահուամբը՝ մենք մեր ապադայ Պանթէօ-  
նին մէջ անմահութիւն մը ևս վաստրկեցանք։

Մեծերը միայն կը սիրեն միծ վիշտերը, ու Պայրըն  
սիրեց Ելլադան, Քիյեար սիրեց Հայաստանը, միակ վէր-  
քը գուցէ՝ երկրագունափառ կուրծքին վրայ պեղուած։  
Ան սիրեց հայ Յեղը իր դարաւոր հաւատքին համար, հայ  
Ժողովուրդը՝ իր զոհաբերումին համար, հայ Միտքը՝ իր  
ստեղծագործութեան համար, Ան, մերինէն աւելի գորա-  
ւոր հաւատքով մը՝ կարծիս, հաւատաց մեր Ապագային  
որ պիտի գար օր մը իր յաղթանակով արշալուսելու  
նահատակներուն ածիւններէն սկսեալ՝ մինչև կատարները  
քաջերու Գողգոթային։

Քիյեար ծնած էր Ֆրանսացի, և ապրած էր Մարդկու-  
թեան համար. մանրանկարն էր այն նոյն ինքն Ֆրանսա-  
ցին՝ որ իր Մեծ Յեղափոխութիւնը, միւսոնաւոր զաւակ-  
մին։

Կերուն արիստովը դիմությած : Նուիրեց Աշխարհին ,  
նուիրեց ինքովնքը իր լեզուով , իր գրականութեամբ և  
համաժարդելովն երջանկութեան իր երկուաքով :

Քիյեար ծառայեց ազգի մը՝ զրո ուրիշներ զգետնեցին ,  
որուն լեզի ու քացախ մատուռւակեցին : Յիմար պիտի  
կոչվին շատեր , վեհ պիտի կոչեին ուրիշներ անոր  
որ սպասորկեց Խաչմլութեան մը : Եւ ոչ սպաքէն նախ  
այդ Խաչելութեան ճակտին կը ցաթէր ֆրանսական  
փարոսին իւրաքանչիւր ճառագայթ , անդրադարձուելու  
համար յետոյ , դժնդակ զոհաբերումով , օսմանեան երկրին  
խաւար խորքերը՝ մինչեւ ծայրը դահճներու սուրին . . .

Խորհիլ , գրել , գործել , պայքարիլ լքուած Ժողո-  
վուրդի մը համար . անա՛ քանաերորդ դարու սպետա-  
կանութիւնը՝ որ կու գար խթանել Եւրոպուցի խիզճը ,  
բանալ Քաղաքակրթութեան աչքերը , արթնցնել մարդ-  
կային Միտքը՝ զոր կը սպաննէին հայ ժողովուրդին մէջ  
իսկ , և այսպէսով կը կուրցնէին համաշխարհային ըդեղին  
մէկ զօրաւոր բջիջը :

Այս օր արդ գաղափարի Ասպեսը ոչ ևս է : Իր կեանքը  
մեղի արտեցաւ , և իր մահը Ֆրանսային . գերադոյն  
նուէր . և որ քան պիտի ուզէինք դեռ ունենալ իր լու-  
սայորդ աճիւնն ալ մեր մնծ զոհերուն աճիւններուն  
քովը , արիւնով արշալուսուած մեր մայրենի հողին մէջ :

Բուռ մը ծաղիկ իր շերիմին վրայ՝ մեր քաջերուն  
կողմէ՝ որոնց սուրերուն ան հաւատաց և որոնց հա-  
մար հայութիւնը անդամ մը ևս ան սիրեց :

Բուռ մը կնդրու՞կ իր ճակատին վրայ մեր պարման-  
ներուն կողմէ՝ որոնց առջեւ ան երկար տարիներ իր  
սրտին ու մտքին ուկանուվը բացաւ :

Բուռ մը արցու՞նք իր սրտին վրայ՝ մեր մայրերուն  
կողմէ՝ որոնց սուրգին ի խնդիր՝ ան իր անկաշառ դրիք  
մխրճեց քնացած խղճին մէջ Մարդկութեան :

Ու երբ վազը = յանուն մեր կրանիթէ հաւատքին =  
քարձրացնենք մեր յաղթանակին լեռնակուտակ մարմար-  
ները՝ Փիլը Քիյեարի արձանին վրայ հայ ազգը ոսկի  
մուրճով պիտի քանդակէ : —  
«Ահա Ֆրանսայի մը՝ որ հայութեան ծառայից՝  
քաղաքակրթութիւնը փրկելու համար :»  
Դ. ՎԱՐՈՒՅԻՃԱՆ

# PRO ARMENIA

(«Պրօ Արմենիա»ի հիմնարկութեան առիրով)

~~~~~

1900

Սոխրակոյտի վրայ բազմած, արտասուքը աչքերին, մի ձեռքը երծքի լայնարկերան վէրքին, միւսը խորշոմած ճակատին, սղաւոր Հայր, ինչպէս անմիջիթար մեռելատէր, խարւած գորեղներից, մուացրած երէկւայ վիճաէ, մի ցաւակցական խօսք, մի մխիթարիչ ձայն...

«Պրօ Արմենիա»:  
Հայաստանի համար...

Ի՞նչ է Հայաստան: — Աշխարհագրական անուն, պատմական աւանդավայր: Չէ, այլ անլուր, առասպեւական տանջանքների վայր, նահատակութիւնների մի վիթխարի մարմնացումն, որ 95ից դարձել է և լնդ միտու պիտի մնայ պատմութեան մէջ հոմանիշ այն բուրի, ինչ հնարել է չարագործ ուղեղը՝ մարդը մարդու ձեռքով տանջելու. մարդը մարդու ձեռքով մարտիրուացնելու համար...

Հայի հայրենիքը չէ նա, այլ հայի տանջարան...

Իսկ ի՞նչ է ինքը Հայը: Ստրուկ: Ի՞չ. — նա կուեց: Աղա՞տ: Ոչ. — նա շղթայակապ է: Անբա՞խտ: Ոչ. — նա հիացմունք դարթեցրեց: Ի՞նչ է ուրեմն նա.

Ի՞նչ և նրա վիճակի անունը: — Հայ: Ուրիշ ածական գոյութիւն չունի բառարանների մէջ: Կամ պիտի ստեղծագոյութիւն չարկաւոր է ցայց տալ մի ազգ, մի մարդ, մի անհատ, որ ստրուկ է՝ թէև արժանի երջանկութեան, խարւած՝ բայց տանջւած՝ բայց արժանի երջանկութեան, շղթայակապ՝ թէև արժանի անկեղծ աջակցութեան, շղթաները փշրելու: — այն ժապատմութիւնից կոչւած շղթաները փշրելու: — Հայ: Ուրիշ բառ չկայ: Հայ, — տանջուող մարդն է դա:

Տանջուող մարդ...

Դա է ժամանակակից մոածողի նշանակէտը, նրա յոյզերի և հոգեկան փոթորիկների նպատակը, սիրած և յոյզերի և հոգեկան փոթորիկների նպատակը, Մարդասիրուանահման սիրոց մէջ՝ ատած առարկան: Մարդասիրուանահման սիրոց մէջ՝ այդ: Հին սպարացու իդէալն էր՝ թեան տանջւանքն է այդ: Հին սպարացու իդէալը կուել հայրենիքի համար: Նախկին քրիստոնեայի իդէալը — իսակի համար: Ժամանակակից մարդու իդէալը — տանջուողի համար...

Տանջուող՝ հայրենիքի մէջ, տանջուող հայրենիքից դուրս, տանջուող խաչի համար, տանջուող խաչից հեռու, դուրս, տանջուող սաչի համար, տանջուող խաչից հեռու, ոչ մի շրջանագիծ, ոչ մի շրջանակ, ոչ կրօնի, Այլեւս ոչ մի սահմանագիծ, ոչ կրօնի, ոչ կրօնի: Մարդու համար տրոփող սիրալ այսօր ոչ հայրենիքի: Մարդու համար տրոփող սիրալ այսօր ոչ հայրենիքի մէջ, տանջուող է սմէն աղեւս սահման չէ ճանաչում. նա բողոքում է սմէն աղեւս սահման կայ. հնչում է իր ձայնը ամէն տեղ, ուր բռնութիւն կայ. հնչում է լարձաւանեղ, ուր կարիք կայ. ցաման աղաղակ է լարձաւանեղ, ուր օգնութիւն աղերսող կայ, ցընում ամէն անգամ, երբ օգնութիւն աղերսող կայ, մի օր կուբա, մի օր Յունաստան, միւս օր Հեհաստան, մի օր Մակեդոնիա, միւս օր միւս օր Տրանսվալ, մի օր Մակեդոնիա:

Հայաստան:

Այս ներքին մեծութեան խթանն էր, որ մղեց մեծ բալրօնին՝ Յունաստան, մեծ Գարիսալդիին՝ Ամերիկա, Լաֆայէտին՝ Միացեալ-Նահանգները: Այդ ոգին էր, որ Լաֆայէտին՝ Զիացեալ-Նահանգները՝ Զիպրիանիի ձեռքի մի խումբ քաջեր մղեց թեսակիա՝ Զիպրիանիի ձեռքի

տակ, մի այլ խումբ աղաստասէլներ Տրանսվալ՝ Վիլսուա-  
Մարիօյի ձեռքի տակ... Դրա մէջն է ժամանակակից  
մտածողի, գործողի, զրողի գաղափարական մնաւ-  
նը, նրա ուժը, նրա հրապոյը, ինչպէս և, աւազ, նրա հոգեկան կրնակի տանջանքը...

Ահա զրողը սեղանի առջեւ.— ամբողջ զէնքը՝ մի  
կտոր թուղթ, մի փոքրիկ գրիչ: Շրջապատող պարզու-  
րան է, նա յուղւած է, ևնթակայ աննկարագրելի վըշ-  
տերի: Լուրերը գուժաբներ են, ծանր, յուզող...

Դիտում է նա, ինչպէս արծիւը ծերպի վրայից,  
տանջւող, հաղածական, թշւառ մարդուն ամէն տեղ,  
բոլոր անկիւններում,— և այն ձորերում, ուր կատար-  
ւեց կոստրածների կլասիք ողբերգութիւնը, և այն լիու-  
ների տակ, ուր հեղին գիցաբանութիւնը շղթայեց Պրօ-  
մէթէօը. այն վեհանուն վայրերում, ուր Պերիկէսների  
տրեց փաշաների ախրապետութեան. Կղղների շուրջը,  
ուր «վայրենի» Ագվինալդօ աղատութեան երգեր հիւսեց  
իր ժողովրդի վշտերից. սրբազն Գանգէսի ավին, ուր  
դեռ սաւառնում է Բրահմայի վարդապետութեան դա-  
րեւոր սգին Աֆրիկան դաշտերում, սրաեղ նորագոյն հե-  
րոսները նորագոյն թերմօսիլ ստեղծեցին. Ակեղեցու մէջ,  
ուր անօգուտ Աստծու անունով աղատ միտքը շարունա-  
կում է կրել շվեմաներ, հիւսեած «սուրբ հաւրերի» փափուկ  
մասներով. դահերի շուրջը, ուր «հայրախնամ» քօղի  
տակ նոր լուծեր են դնում աղգերի վիճքին, կոփւած  
գայխանակիր ձեռքերով...

Տարիներ առաջ, հատ հատ, բացառիկ էին «օտար»  
տանջւողների պաշտպանները. բայց երէկւան բաժան  
ուժերը այսօր միմեանց մօտենում, խմբւում են, ամ-

բողջ կազմակերպութիւններ, կուսակցութիւններ են  
դառնում, ընդունակ զեկավարելու, նոյն իսկ սպառնա-  
լու նրանց, որոնց փեշակը դարերի ընթացքում միմիայն  
սպառնալիքն է եղել: Մարդկացին տանջանքը, թոյլերի  
վիշտը, խողիսողւողների երկրից հնչող աղէխարը գոչերը  
միացրին միմեանց անձանօթ, տարրեր աղգերի, տարրեր  
միացրին անձանց հոգիները: Բողոքը այժմ անհա-  
կրնների պատկանող հոգիները: Դա թշւառների սիոփանքն  
է, սպառնալիք՝ բռնութեան...

Ու դրա մինոր ապացոյն է այս օրգանը, «Պրօ  
Արմենիա», որ լոյս տեսաւ Փարիզ, նւիրւած Հայերի  
Արմենիա», որ լոյս տեսաւ Փարիզ, այսպիսի զրաւիչ  
պաշտպանութեան — զարդարւած այսպիսի զրաւիչ  
անուններով՝ ինչպէս Կէմանսօ, Անսատօլ Ֆրանս, Ֆօրէս,  
Գրեսանսէ, Դը Ռօբէրտ, Ֆերրի, Վանդէրվելդ, Քիառ,  
Պրևանսէ, Դը Ռոբէրտ, Ֆերրի, Վանդէրվելդու շատ հայտաէրներ  
որոնց անշուշտ կը գան ձախակցելու շատ հայտաէրներ  
կա Ամանչի և Հունոսի միւս ափերից, և գուցէ այսպիսի  
կա Արմենի միւս ափերից, ուր նահատակ ժողովուրդների աղերսը  
երկիրներից, ուր նահատակ ժողովուրդների աղերսը  
երես ցասման աղաղակներ չէ կորդել անտարբեր բերան-  
դեռ ցասման աղաղակներ չէ կորդել անտարբեր բերան-  
դեռ ցասման աղաղակներ ...

Կ'անցնն տարիներ ...

Արտասուզքի ձորերում — մեր անխախտ հաւատն է  
այդ — կը ցամաքի արեան վրային կաթիլը, և ըիրիիա-  
կան դրախտի փառաբանաւո գեղեցկութեան հովհաննե-  
կան հարաւի չքնաղ արեգակը՝ սեսև դիակների  
րում՝ հարաւի չքնաղ արեգակը՝ սեսև դիակների  
փոխարէն կը գայ լուսաւորելու շնականի կենդանարար  
փոխարէն կը գայ լուսաւորելու սեսւելի արդասիքները ...  
աշխատանքը, աղատութեան սեսւելի արդասիքները ...  
Եւ այն երջանիկ օքնեն, երբ խողիսողւած Հայերի ազատ  
ու այն երջանիկ օքնեն, գրդւած ներքին բնազդներից,  
որդիքն ու թոռները, գրդւած ներքին բնազդներից,  
կը դառնան դէպի ի պատմութիւնը, գէպի հայրենի սարկու-  
կը դառնան դէպի ի պատմութիւնը, գէպի հայրենի սարկու-

ւեն այն խնկելիք անունների հետ, որոնց կրած վիշտը ապագայում պարձանք պիտի կոչւի... Եւ հպարտ այն հերոսների յիշատակով, որոնք իրենց արիւնը տւեցին հայրենի երկրում ազատութեան ծիլեր բուացնելու համար, հպարտ այն զոհերով, որ ազգային սուրդի մէջ անգամ ժայիտ է բերում դառնացած սրտերին, ապագայ հայութիւնը խորին յարգանքով կը յիշի և ձեր քաղցր անունները, ձեր գործը, ձեր գրիչը...

Եւ աւելին: Ազատութեան օրերին, հայկական բարձրավանդակի շատ խորշերում, որոնց անունն անգամ առիթ չէք ունեցել լսելու, — նորագոյն հայ սերունդը, ձեր անունների հետ միասին բարձրագոչ կը հնչեցնէ և այն գաղափարները, որ մենք ձեր միջոցով և ձեր հայրենիքից ստացանք — գաղափարներ՝ այժմ հաղածական սուլթանի երկրում, — մղելով նրանց դէպի աւելի հեռու, դէպի ասիական խորքերը...

Աւելի մեծ վարձք չկայ գաղափարի մարդու համար: Եւ այդ թող լինի ձեզ արժանի վարձքը:

Ե. Ակնոհին

## ԴԵՊԻ ԳԵՐԵԶՄԱՆ

9 Փետրվար 1912

Երէկ թաղեցինք մեծահոգի, ազնուական Քիյեարին, որի յատակ անունը տամնեակ տարիներ շարունակ կապւած եղաւ տառապող ժողովուրդների դատի և մասնաւոր հայկական արիւնոտ, նւիրական դատի հետ: Հորապէս հայկական արիւնոտ,

Ամբողջ խորհող, զգացող Պարիզը իր մեծանուն ներկայացուցիչներով այստեղ էր: La Ligue des Droits de l'Homme»ը լրիւ կազմիրով, Եւ Անատօլ Ֆրանս, Եւ Ֆրանսիս դը Պրէսանսէ, Հանրի Շը Ռընեիէ, բազմաթիւ ուրիշներ, որոնք թւելը երկար լինէր, լուռ շարքերով բարձրանում էին դէպի Պէրկը լինէր, լուռ շարքերով բարձրանում էին դէպի Պաւլաշէզ յամրաքայլ ու հանդիսաւոր. ու նրանց հետ Պաւլաշէզ հայ գաղութիւնի մի ստուար խումբ և աւելի ստուար թւով հայ ուսանողներ:

Թարմ ծաղիկների պսակների տակ թաղւած դիակառը դանդաղ թաւալւում էր ընդարձակ գերեզմանատան անծայր ծառուղիներով, ուր երկու կողմում, լուռ գամբարանների մէջ, հանգչում են Ֆրանսիայի մեծութիւնն ու փառքը, նրա ընտիր առաքինութիւնները ապրած այնքան մեծ հոգիներ:

Պսակների գոյնզգոյն ժապաւէնները թեթև հովի առաջ փողփողում էին և պայծառ արեւի առաջ փոռում առաջ փողփողում էին և պայծառ արեւի առաջ փոռում առաջ յոյզերը այս անակնկալ, այս մեծ մահւան հասկեառ յոյզերը

մար : Ահա Դաշնակցութեան կարմիր ժապաւէնը սպիտակ ու կարմիր ծաղիկներից քաշ , ուր հայ հզօր , մարտական կաղմակերպութիւնը , իր քսան տարիների դժբնդակ պայքարների մէջ կնճռոտած ճակատն է խոնարհում . իր մարտակցի դագաղի առջև և հեռաւոր Արեւելքից իր յետին ողջոյն ուղարկում «տառապող ժողովորդների Սմնկուն Պաշտպանին» : Ահա Պարլիզի հայ գաղութի չքեղ պսակը հայ դատի անփոխարինելի պաշտպանին . ահա Դրօւակի կարմիր խորհրդից հիւսուած կարմիր պսակը «Աղասութեան ու Արդարութեան Սմնման Մարտիկին» . ահա՛ հայ ուսանողներինը , իրենց մատաղ , անաղուրտ հոգիների անվերապահ երախտագիտութեամբ դէպի այս ազնիւ ու մեծ սրտով մարդը , որ նրանց համար անհատնում ոգեւորութեան ու բարձր ներչնումների անսպառ աղբիւր է լինելու հայ կեանքի փշոտ ճանապարհին :

Եւ յետոյ՝ դարձեալ պսակներ , պսակներ , անգամ հեռաւոր Ամերիկայից , հայրենածարաւ Հայրենիքից ... :

Հայ ուսանողները մի գողարիկ մտածումով , խընդրում են թող տալ գերեզմանատան մէջ գոնէ՝ դագաղը ուսերի վրայ տանել : Դիմում եմ ազգականներին . նրանք շփոթւած են : Նրանք չգիտեն որ Արևելքում յարգանքի ու սիրոյ գերագոյն արայտայտութեան նշան է , իրենց համար այդքան խորի , այդքան անօրինակ ցոյցը : Մերժել անկարելի է . սակայն , այնքան բուռն , այնքան սրտագին է հայ երիտասարդների գրաւիչ ցանկութիւնը : Եւ ահա կէս ճանապարհին , Պէր-Լաշէզի բարձունքների վրայ , դիակառաքից ցած է բերում դագաղը , որ հայ երիտասարդներ բարձրացնում են իրենց հուժկու ուսերին : Զարմանքի խառն հիացմունքով դիտում են այս յուղիչ տեսարանը Գրանսիացի յուղարկաւորները . թափօրու վերստին շարժում է առաջ :

Յարդանքի և երախտագիտութեան այս բացառիկ , այս չքնար հարկը թաղման հանդէսի լաւագոյն արտայացութիւնն եղաւ : Ապրիլի ք , երիտասարդ , աղնի՛ւ հայրենակիցներ :

Ու թաղեցինք տառապող Հայութեան լաւագոյն բարեկամմին . . . :

Քահանայ չկար և ոչ աղօթք , թաղումը քաղաքացիական էր . խորունկ ու սգաւոր լոռութիւնն էր փոխանակում հոգեւոր երգերն ու կարգը և համր ու անկեղծ արցոնէքը — բարձրաձայն վիշան ու կոծը : Այսպէս էր կամեցել ինքը՝ Պիէռ Քիյեար որ աշխարհի ցաւերի ու կամեցել ինքը՝ Պիէռ Քիյեար որ աշխարհի ցաւերի ու չարփի դէմ ժպտով պարքարեց , և իր սմինածանը բուպէներում խոկ՝ թախիծութեան ու մռայլին անծանօթ մնաց :

Պատերազմի դաշտում յանկարծ ընկած մարտիկի թաղում էր . դամբարանի վրայ ո՛չ մի ճառ , հիացմունքի , կամ վշտի ո՛չ մի խօսք չարտասանւեց : Այդ էլ իր յանկութիւնն էր , այս միշտ համեստ , միշտ անուշ մարդու , որ դիտցաւ առանց մին ցուցամուլութեան , առանց ազմուելի ապրի մի մեծ , մի հոյակապ կեանք և նոյնքան վեն լոռութեամբ գերեզման իջաւ :

Ոչ փող զարկին , ոչ արձագանք լեռնասոյզ ,

Սարէ ի սար չարագուշակ ւարին լուր . . .

Մեծ մահերը կարօտ չեն ո՛չ դամբանականների , ո՛չ ներբողների : Դադաղը դամբանի մէջ իջեցրին , ապա յուղարկաւորները մէկիկ մէկիկ անցան առաջից , վերջին հրաժեշտոր տւին , և ծաղիկներով ծածկեցին նրա յաւիշական ապաստանը :

Եւ մրայն Ֆրանսիացի ու Հայեր չէին , որոնք եկել էին յարդանքի գերագոյն ու յիսին հարկը տալու այս պահին , այս գաղափարական մարդուն . խմբերով անցանիւ , այս գաղափարական մարդունից առջեւից և՛ Ծումներ , և՛ Բուլնում էին գերեզմանի առջեւից :

գարներ, և Սկրբեր, և Ֆիլանտացիներ, և Թուրքեր,  
բոլոր այն ժողովուրդների ներկայացուցիչները, որ նց  
ազատազրութիւնը դեռ թերի է, կամ որոնք տա ա ին  
տառապում են որ և է բանութեան լծի տակ:

Քիյեար իր հմայիչ կեանքով, և իր այս անակնկալ,  
այս անժամանակ մահով բոլորին համախմբել, միացրել  
էր իր դամբանի առաջ:

— Անփոխարինելի կորուստ ունեցանք և մենք, և  
մանաւանդ դուք, ասում էր ինձ Ֆրանսիս դը Պրէսան-  
սէն, աչքերը սրբելով. և ով կարող էր երեւակայել,  
թէ ես պէտք է թաղեմ Քիյեառին, փոխանակ, որ նա  
ինձ թաղէր:

Եւ պատւական, մեծ ծերունին դողում էր յուղ-  
մունքից:

Այո՛, մեծ, շատ մեծ կորուստ ունեցանք շատերի  
հետ, մանաւանդ՝ մենք Հայերս, մեր պատմութեան այս  
անակնկաներով հարուստ ու մութ շրջանում:

Եւ անսպասելի կորուստ:

Մահից մի օր առաջ մօսն էի, հիւանդանոցում, ուր  
նա արդէն կազդուրեւել էր և ոտքի կանգնել մի աննշան  
օպերացիայից յետոյ: Միշտ ժպտուն, միշտ եռանդով լի,  
վերսկել էր իր աշխատանքները որպէս La Ligue des  
Droits de l'Hommeի քարտուղար, ու միաժամանակ  
զբաղւած էր հաղար ու մի կողմնակի խնդիրներով, այ-  
ցելուներով:

— Կ'ուզէ՞ք գիտնալ, թէ մինչև ո՞ւր է իջել մեր  
գոված ֆրանսիացի ժողովուրդը, ահա թերթեցէք այս  
գիրքը. մի պաշտօնաթող գնդապետ է գրել, — ու նա  
քան քան ինդաց — և վորձում է ասպացուցանել. թէ  
Ֆրանսիան կը կորչի, եթէ ժամ առաջ մեր քահանաների  
փէշերին չփարի: Զէք հաւատում, այնպէս չէ՛, որով-  
հետեւ յեղափոխութիւնից անցել է 120 տարի... այո՛,  
հետեւ

եւ յուռանք ունիք չհաւատալու, բայց լսեցէ՞ք, կարդամ  
գոածս:

Այս մի մեծ յօդուած էր, մի տեսակ աԵղծ աղանդոց»  
ընդունելումն առաջը դրած էր իրեն յատուկ սրամտու-  
թեամբ ու հիւմորով նա վեր էր հանում Սատծուն՝  
կեղծօրէն, փարիսեցիօրէն փարող այդ մարդկանց քաղա-  
քական հասարակական նպատակները, նրանց բոլոր  
գաղանի մեքենայութիւնները աշխարհի տէրը մնալու  
համար:

Վերջերս կղերականների մի ամբողջ առաքելութիւն  
է կազմակերպւած Ֆրանսիացիներին «Պարձի բերելու»:  
Այդ նպատակով, միախճաներ են դրկում, գաւառից  
գաւառ քարոզելու: Ահա այդպիսի մի առաքելութիւն էր  
հասել Պարիզից երկու ժամ հեռու Մոնդիների հա-  
մայնքը: Ազատ մտածող բարեկամներ ահակոչ էին արել  
գէպի Քիյեար, ինչդրելով գնալ հրապարակական մի բա-  
նակութի համար: Հիւանդ էր, գնալ չէր կարող և ահա  
ուղարկում է խօսքը գրաւոր, որ յաջորդ առաւօտ պիտի  
կարդացուէր այդ ժողովում:

Եւ յաջորդ օրը Քիյեարը մեռաւ: Ֆրանսիական  
կղերը, այս անակնկալ մահից իր լէգէնտան կը հիւսէ,  
թէ ով խօսի նրանց դէմ, պատճելու է:

Պատմութիւնը, մանաւանդ կղերական պատմու-  
թիւնը, այսպէս է զրւում:

Բայց կայ բարերախտաբար միւս պատմութիւնը,  
մեծ պակաբարների, մեծ բախտումների պատմութիւնը  
մարդկանի խակական ազատագրութեան, արդարութեան  
և իրաւունքի համար, նշարտութեան մեծ իտէալի հա-  
մար, որ թէկ կրծուած, արիւնու ու վիրաւոր, վեհօ-  
րէն թաւալւում է դժնդակ ճանապարհներով դէպի նոր

յաղթանակներ, նոր արշաւներ։ Այդ պատմութեան փառաւոր գրքի մէջ Քիյեարների անունները կը մնան ոսկետառերով դրօշմւած։

տառերով դրօմւած։  
Եւ հայ աշխարհում մի օր անշուշտ կը մոռացւին  
միծ ու փոքր Համբաներ և Մուսա բէգեր իրենց նող-  
կալի ոճիներով, անցեալի մշուշը կը գայ մեղմելու ու  
մարելու Ուրֆայի ու Ատանայի նման սարսափները, ցե-  
ղական ու կրօնական վայրագ մոլեգնութիւնը կը սանձեի  
քաղաքակրթութեամբ, խաւար, անզիտակից խղճմտանք-  
ների վրայ իմաստութեան ու արդարութեան արեւի  
ցոլքերը կը չողան, այո՛, կը մոռացւին այդ օրերում  
շատ ցաւեր, սարսափներ ու ոճիներ, բայց Պիէր Քիշ-  
շատ ցաւեր, սարսափներ ու ոճիներ, երախտագիտութեամբ ու  
եարի անունը միշտ կը հնչւի երախտագիտութեամբ ու  
սիրով բոլոր հայ իրածիխներում, բոլոր հայ յարկերի տակ։  
Թագավոր եռ միծ փատակին։

Յարդանք իր մեծ յիշատակին :

ԱՀԱՐՈՆԵԱՆ

Qurhq

ԱԳԱՆԱՆԴԻ ԸՆԵՐ

I. ՊՈԼԻՍ

Տարիներու ընթացքին, Պոլսը դժուար թէ տեսած ըլլար այնքան յիշատակելի օր մը, որպիսին էր 1912 վետրվար 2/15-ի հինգշաբթին։

Աւելի քան հազար հոգինոց բազմութիւն մըն էր որ ,  
բարախուն ակնածանքի և խոր վշտի դգասումներով , կը  
փութար Բերա , Խւնիօն Ֆրանսէզի սրահը , Փիէռ Քի-  
եառի սգահանդէսը կատարելու : Երկու սեռէ , և ամէն  
ցեղէ քաղաքացիներու բազմութիւն մըն էր որ կը ծը-  
փար ընդարձակ սրահին մէկ ծայրէն միւսը : Սնակնկալ  
հարւածէն ալեկոծ սիրտսերը արհամարհած էին փոթորիկը  
որ շղթայազերծ կը մոնչէր այդ օրը , արհամարհած էին  
անձրեւը որ կը տեղար յորդահոսան :

Ներկայացուցիչներ դրկած էին Պոլսոյ գրեթէ բո-  
լոր ազգային հաստատութիւնները, — հայ երեք յարան-  
ուանութեանց վարչութիւնները, հայ քաղաքական  
կուսակցութիւնները, Միացյալ Ընկերութիւնը, Ազգա-  
նըւէր Հայուհեացը, զանազան վարժարաններ, Պատուի-  
րակներ ունիլին Իթթիհատ թէրագուն, մակեդոնական,  
ռակներ ունիլին Իթթիհատ թէրագուն, մակեդոնական,  
յունական, հրէական, ալպանական կազմակերպութիւն-  
ները: Ֆրանսական դեսպանին կողմէ եկած էր Բ. քար-  
տուղար Թօնիթ ալ Սէն-Քանթէն, ֆրանսական գաղու-

թին կողմէ՝ Պղսոյ ֆրանսական առևտրական սենեալին նախագահ Պ. Ժիրու:

Բեմին մէկ կողմը՝ եռոտանի պատուանդանի մը վըրայ դրուած էր Քիյեառի կինդանագիրը, պատած սեւ շղարշով և շրջապատուած դափնեպսակով, և զոր կը կրէին երկու սեազգեստ հայ օրիորդներ:

Սգահանդէսին բացումը կատարեց նախագահ Պ. Վարդգէս, օսմ. պատգամաւոր Կարլինի, որ ներկայ հոծ բազմութիւնը նկատեց իրեւ ապացոյց հայ սպազի մեծ համակրութեան: «Քիյեառի գործունէութիւնը աւելի արդիւնաւոր եղաւ քան չատ մը Հայերու գործունէութիւնը»:

Պ. Յ. Սինանեան դաշնակի վրայ նուագեց Շօվիէնի մահերգը: Ֆողովուրդը ուսքի վրայ ունինդրեց Շնորհալիի «ննջեցելոց տաղը», զոր երգեց Կոմիտաս վարդապետ:

Խաւար մեղաց հալածեցաւ,  
Լոյս զիտորիսն ին ծագեցաւ,  
Խայրուածի օձին թժկեցաւ,  
Հիւանդուրիւնի ին ուղացաւ:

Պ. նախագահը յաջորդաբար բեմ հրաւիրեց օրուան բանախօսները:

Պ. է. Ակնունի ուրուագծեց Մեծ Հանգուցեալին համառօտ պատիերը, բայց մանաւանդ անոր կատարած գերը Եւրոպայի հայանպաստ շարժման մէջ: «Մեռաւ ան յանկարծ՝ ինչպէս զինուորը որ գնաւակնար կ'ըլլայ երբ յանկարծ՝ ինչպէս պատիերն: Քիյեառ մեռաւ, բայց մի մունքը ձեռքն է տակաւին: Քիյեառ մեռաւ, բայց մի մունքը որ մեծ մարդիկ իրենց մահուանէն ետքը կ'առիրին, և երբ օր մը ունենանք Հայ Պանթէօնը, Քիյեառի գեղեցիկ գլուխը պիտի կանգնի հոն բարձր՝ մեր հերոսներու գլուխներուն քով»:

Հիւսէլին ճահիտ պէյ, օսմ. պատգամաւոր Կ. Պոլ-

սոյ, խմբագրապետ «Թանին»ի, խօսեցաւ իթթիհատ թէրագը կուսակցութեան կողմէ: Յայտնեց թէ Ապտիւ Համբիտ ուղած էր գրաւել զայն, բայց Քիյեառ ըստաւ. «Գլնդակով պիտի ողջունեմ այն որ Համբիտ կողմէ սենեալս կը մտնէ, զիս համոզելու համար:»

Պ. Ա. Վռամեան վերլուծեց Քիյեառի հոգին: «Ան կրցաւ ըմբռնել հայութեան եղերերդական կացութիւնը — ընդունակութիւններով, ուժերով, տեհնչերով հզօր ժողովուրդ մը, որ իր տեհը կը վնասուէր մարդկութեան սեղովուրդը մը, որ իր տեհը կը վնասուէր մարդկութիւնը գողթան զանին շուրջը. ճանչցաւ անոր գրականութիւնը գողթան զանին մինչեւ հայ վերածնութեան երգիչները, ու սիրեց զայն:»

Տէրլիշ Հիմա պէյ. Ներկայացուցիչ արպանացի ուսանողներու, թուրքերէն լեզուով յարգանք և հիացում յայտնեց «այդ անուշ, այդ պայծառ մարդուն»:

Պ. Պետրոս Հալածնեան, օսմ. պատգամաւոր Կ. Պոլսոյ, նախկին նախարար հանրօգուտ շինութեանց, խօսեսոյ, վախարդէն ճառ մը, որուն հայերէնը հրատարակուած է ներկայ հասորին մէջ:

Վերջին խօսողն եղաւ Պ. Գ. Խաժակ, որ հրաւիրեց հայ նոր սերունդը՝ օրինակ առնել Քիյեառներու մարդկայնութենէն:

Նախադահը փակելով ժողովը, կարդաց այս առթիւ պատրաստուած ցաւակցական հեռագիր մը, ուղղուած պիտի գրոշակից ընկերներուն և սգաւոր ընտանիքին: Քիյեառի գրոշակից ընկերներուն և սգաւոր ընտանիքին:

## II. ՃԱՅԵԱՍՏԱՆԻ ՄԻԶ

Մեծ մարդասէրին մահուան առթիւ, համակրանքի արտայացութիւններ տեղի ունեցան նաև Հայսատանի գանազան կեղրոններուն մէջ, — Կարին, Վան, Բաղէշ, Մուշ, Երզնկա, Տիգրանակերտ ևայն, ուր սգահանդէսներ կատարուեցան, մամնակցութեամբ առաջդէսներ կատարուեցան, քաղաքական կուսակցութեանց և հիւսորդարաններու, քաղաքական կուսակցութեանց և հիւ-

պատումներու : Բոլորին ալ հայ ժողովուրդը կը մասնակցէր հոծ բազմութեամբ, զեղուն մեծարանքի և երախտագիտութեան զգացումներով :

Կարինի մէջ, հայ զինուորներու նախաձեռնութեամբ հանգանակութիւն մը սկսաւ, Փիէռ Քիյեառի յիշատակն գրադարան-ընթերցարան մը բանալու համար Սակին մէջ :

### III. ՓԱՐԻԶ

Փարիզի հայ գաղութն ալ իր կարգին կազմեց սըսքանդէս մը : Այս առթիւ համախորհուրդ ընտրուեցաւ մասնաժողով մը, որ որոշեց ընդհանուր հանգանակութեան մը ձեռնարկել, Սասունի մէջ վարժարան մը բանալու համար, Քիյեառի անունով :

Փարիզի մէջ սգահանդէս կաղմեցին նաև Քիյեառի ֆրանսացի բարեկամները, մասնակցութեամբ խուռն բազմութեան մը :

Կը նախագահէր Պ. Անաթօլ Ֆրանս, որ խիտ գիծերով ներկայացուց պայքարի մարդը : «Այս մելանոյշ քնարերգակը ժողովրդական ատենախօսներու ամէնէն ամենին էր : Բայց իր ցասումին մէջ, իր առաքինի ատելութիւններուն մէջ, իր մտածումը կը մնար զինչ ու յստակ . երկիւղը երբէք շխոռվեց զինքը : Ինչպէս ֆրանսիս առ Փրէանսէն որուն պայքարի ընկերն էր, ան վտանգին կը դիմագրաւէր ժայռագին» :

Պ. Ա. Անարոնեան խօսեցաւ հայ ազգին կողմէ, իրք վերջարան՝ բիւր չորհակալութիւն յայսնելով «ըքնաղ և բեղմնաւոր ֆրանսացին, որ ամբափնդեց մեր ոլքանգան հաւատքը, մեր երբեմն դեղեւուն յոյսերը, ֆրանցի հոյակապ զաւակներուն և մանաւանդ հիանալի, սայի գիյեառին, որուն փառաւոր անունը յաւէտ պիազնիւ Քիյեառին, որուն փառաւոր անունը յաւէտ պիազնիւ Քիյեառին, որուն փառաւոր անունը յաւէտ պիազնիւ Քիյեառին, աղամբ համարութեան և ճշմարտութեան» :

Պ. Ա. Զօպանեան վշտակցութիւն և յարդանք յայսնեց կ. Պոլսոյ կեղրանական վարժարանին կողմէ, և գծեց Քիյեառի պղոսկան գործունէութեան պատկերը : «Քիյեառ եղաւ մէկը նոր Սամարացիներէն, որ եկաւ մօտեցաւ մահամերձ ժողովուրդիմը, կապեց անոր վէրքերը, անոնց մէջ իր կարեկցող գորովին ձէթն ու իր համարումին գինին հոսեցուց... Քիյեառի յիշատակը պիտի ապրի մեր ամէնէն պատկառելի ազգային սուրբերու և հերոսներու յիշատակին հաւասար» :

Ապա խոսք առաւ Պ. Ֆրանսիս առ Փրէանսէ, Հայերու այդ անման բարեկամը, Մարդկային իրաւունքներու Դաշնակցութեան կողմէ : Իր պատկերացումը ուժգին էր և հզօր :

Ցաջորդաբար խօսք առին Պ. Ժիւառ՝ Les Temps Nouveaux յեղափոխական թերթին կողմէ, Պ. Ա. Ֆան-թէնա՝ Mercure de Franceի գրական խումբին կողմէ, Պ. Ֆէրտինանտ Հէրօլտ ևն.. :

### IV. ՀԱՄԱԳՐԱՑՐՆ ՎԵՇԱԿՑՈՒԹԻՒՆ

Ազգային ժողովին որոշումով, հետեւեալ ցաւակցական հեռագիրը ուղղուեցաւ այրի տիկին Քիյեառին :

«Հայոց Ազգային Երեսփոխանակոն Ժողովը պատօն տուած է ինձ ցաւակցուրին յայսնել Զեր այն ողբալի կորուսին համար զոր ունեցաք յանձնին ձեր ամուսնոյն, Ա. Փիէռ Քիյեառի, անկեղծ բարեկամը Հայոց Ազգին :

Ատենապէս

Հայոց Ազգային ժողովին  
(Սուրագրուրին)



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

---

	<b>Էջ</b>
Յառաջաբան	9
Հայկական սուզ	12
Արուեստագէտը եւ մարդը	14
Եւրոպացին	17
Մարդասէրը	20
Քիյեառ մտերիմ	23
Գաղափարի մարդը	25
Մեր Քիյեառը	28
Պիեր Քիյար	32
Թարմ շիրմի առջեւ	36
Հերոսական Քիյեառը	38
Ախոյեան մը	42
Փիէռ Քիյեառ բանասեղծը	45
Մը ի բարեկամը	50
Մեծ հոգի մը	55
Փիեր Քիյեար	64
Այն մէկը...	69
Գաղափարի Ասպետը	72
Pro Armenia	77
Դէպի զերեզման	83
Սպահանդէսներ	

Կովկաս

□ □ □ Այս հատորէմ □ □ □  
150 օրինակ՝ ըմտիր թուղթով  
և թուազրեալ՝ տրամադրուած է  
Փիէռ Քիյեառի Յուշաբ ծանի  
շիմութեամ մասնաժողովին:  
□ □ □ Գինը կԱՄԱԽՈՐ □ □ □

ՀՀ Ազգային գրադարան



NL0315495

